



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Ամերիկեան «Կեղծուած»

Ընտրութիւնները եւ Հայաստանը

Նախագահ ընտրուելէն աւելի քան երեքամիս ու պաշտօնի ստանձնումէն մօտ մէկ ամիս ետք, Տոնալտ Թրամփ տակաւին չի կրնար հաշտուիլ այն իրողութեան հետ, որ Հիլըրի Քլինթըն ստացած էր մօտ երեք միլիոն աւելի ժողովրդային քուէներ, քան ինք: Թրամփ կը շարունակէ վիճարկել ընտրութիւններու արդիւնքները: Ան նախ պնդեց որ 3-5 միլիոն ոչ քաղաքացիներ մասնակցած են ընտրութիւններուն եւ քուէարկած՝ Քլինթոնի օգտին: Իսկ անցեալ շաբաթ, ան նոր ամբաստանութիւն մը կատարելով ըսաւ թէ, Նիւ Համփշայր նահանգին մէջ, ուր ինք պարտութիւն կրած էր, այլ նահանգներէն պատերով մարդիկ փոխադրուած են ու հոն քուէարկած:

Շատ մը նահանգներու կառավարիչներ՝ հանրապետական եւ Դեմոկրատ, հակադրօճեցին ըսելով թէ, ոչ քաղաքացիներու քուէարկութիւնը բացառուած է, իսկ իրենց կողմէ կատարուած յետընտրական քննութիւնները երբեք ալ ցոյց չեն տուած նման պարագաներու գոյութիւնը: Նոյնը ըրին նաեւ Նիւ Համփշայրի հանրապետական ղեկավարները, որոնք եկան հերքելու պատերով ընտրողներ տեղափոխելու մասին պնդումները:

Ամերիկայի մէջ ընտրութիւններու լայնածաւալ կեղծումը բացառուած է, նկատի առնելով այն իրողութիւնը, որ հոս գոյութիւն չունի կեղծուած ընտրական յանձնարարութիւնները: Ընտրութիւնները կը կազմակերպուին տեղական մակարդակներու վրայ՝ նահանգային ու գաւառներու եւ քաղաքներու մէջ գործող խառն մարմիններու կողմէ:

Տոնալտ Թրամփի այս անպատասխանատու մեղադրանքները վտանգաւոր են նաեւ արտաքին քաղաքականութեան առումով: Այսուհետեւ, այլ երկիրներու ընտրութիւններուն Ամերիկայի կողմէ կատարուած քննադատութիւնը կը դառնան իմաստազուրկ:

Մօտ օրէն Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան խորհրդարանական ընտրութիւններ, որոնց արդարացիութեան նկատմամբ այժմէն իսկ թերահաւատութիւն կը տիրէ ժողովուրդի մօտ: Կասկած կայ որ, իշխանութիւնները, անցեալ նման, ամէն ինչ պիտի ընեն իրենց վերընտրութիւնը ապահովելու համար: Այս պարագային, միջազգային դիտորդներու ոչ դրական գնահատականներուն իբրեւ պատասխան կրնան օրինակ բերուիլ Ամերիկայի ընտրութիւնները՝ ըսելով. «Յոն եւս կեղծիքներ կ'ըլլան, այդ մասին հարցուցէք նախագահ Թրամփին»:

«ՄԱՍԻՍ»

ՀՀ-ի Ընտրական Ցուցակը Պիտի Գլխաւորէ Պաշտպանութեան Նախարար Վիգէն Սարգսեան

Փետրուար 14-ի երեկոյեան հրապարակուեցաւ Հայաստանի իշխող կուսակցութեան՝ ՀՀԿ համամասնական ցուցակը, ուր կային բազմաթիւ անակնկալներ:

Ցուցակը կը գլխաւորէ Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան: Սերժ Սարգսեանն ու վարչապետ Կարէն Կարապետեանը ցուցակին մէջ չկան:

ՀՀԿ գործադիր մարմնի նիստի աւարտին, Կուսակցութեան խօսնակ էտուարտ Շարմազանով լրագրողներուն յայտնեց, որ հաստատուած է համամասնական ցուցակը՝ Վիգէն Սարգսեանի գլխաւորութեամբ: Յաջորդ տեղերը կը զբաղեն Տարօն Մարգարեան, Արփինէ Յովհաննիսեան, Արա Պապուրջեան եւ Արմէն Ամիրեան:

Առաջին տասնեակի մէջ են նաեւ Արմէն Աշոտեան, էտուարտ Շարմազանով, Մարգարիտ Եսայեան, Մամուկէ Ֆարմանեան ու Կարէն Աւագեան: Ցուցակը բաղկացած է 64 անձէ:

Որոշուած է նաեւ, որ ՀՀԿ նախընտրական շտապը պիտի ղե-



Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան

կավարէ կուսակցութեան գործադիր մարմինը Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ: Գործադիր մարմինը պիտի ղեկավարէ նաեւ նախընտրական քարոզութիւնը:

Վարչապետ Կարէն Կարապետեանի անունը չկայ ՀՀԿ համամասնական ցուցակին մէջ, սակայն Շարմազանով յայտարարեց որ, եթէ խորհրդարանական ընտրութիւններուն ՀՀԿ-ն մեծամասնութիւն ունենայ, վարչապետը դարձեալ պիտի ըլլայ Կարէն Կարապետեանը: Իսկ ան ցուցակին մէջ չի ներառուած, քանի որ մշտական բնակութեան հարցը խոչընդոտած է անոր մասնակցութիւնը Ապրիլ 2-ին կայանալիք ընտրութիւններուն:

Հայամէտ Գոնկրէսականները Կոչ Ըրած Են Թրամփին՝ Ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը

ԱՄՆ Գոնկրէսի հայկական հարցերով զբաղող յանձնախումբը նորընտիր նախագահ Տոնալտ Թրամփին յորդորած է ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը եւ մերժելու թուրքիոյ վարած լուեցման քաղաքականութիւնը:

«Որեւէ կասկած չկայ, որ մօտ մէկուկէս միլիոն հայ սպաննուած է 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան ժամանակ: Օսմանեան կայսրութեան մէջ Միացեալ Նահանգներու ղեկավար՝ Հենրի Մորկենթաու, արձանագրած է այդ ցեղասպանութիւնը ու զգալի միջոցներ հանգանակած՝ տուժած հայերուն օգնելու համար», - յայտարարած են ղեմնկրատներ Ֆրենք Փալոն, Ճէքի Սփայեր, Ադամ Շիֆ եւ հանրապետականներ Տէյլիտ Թրոթ, Տէյլիտ Վալատո եւ Կաս Պիրիլաքիս:

Ապրիլ 24-ին ընդառաջ, հայամէտ գոնկրէսականներ դիմած են նաեւ իրենց գործընկերներուն՝ յորդորելով միանալ նախաձեռնութեան ու կոչ ընել Սպիտակ տան ղեկավարին՝ այս տարի շիտակ եւ ճշգրիտ կերպով կոչել 1915 թուականի իրադարձութիւնները:

«Ցեղասպանութիւնը ճանչնա-

լով՝ Միացեալ Նահանգներու նախագահը յարգանքի տուրք կը մատուցէ ոչ միայն գոհերու յիշատակին, այլեւ վերապրողներու հաստատականութեանն ու հայկական արմատներ ունեցող բազմաթիւ ամերիկացիներուն, որոնք մինչ օրս կը հզօրացնեն մեր երկիրը», - գրած են ամերիկացի գոնկրէսականները:

Նախագահ Թրամփին ուղղուած նամակին մէջ անոնք նաեւ նշած են որ, ճանաչումը կը հաստատէ ամերիկեան վարչակազմի, կառավարութեան ու օրէնսդիր մարմնի կողմէ նախապէս եղած քայլերը:

Գոնկրէսականները նաեւ դիմած էին Միացեալ Նահանգներու նոր պետական քարտուղար Ռէքս Թիլերսոնին, պարզելու համար նոր վարչակազմի դիրքորոշումը ամերիկահայերու համար զգայուն այլ հարցերու շուրջ: Թիլերսոն խոստացած էր աջակցիլ Հայաստանի ու թուրքիոյ միջեւ դիւանագիտական ու տնտեսական յարաբերութիւններու կարգաւորման, ինչպէս նաեւ հայերու իրաւունքներու, մշակութային ժառանգութեան պահպանութեան հարցերուն:

ՍԴՀԿ-ն Դադրեցուցած է Քննարկումները Ծառուկեանի Հետ

Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը փետրուար 14-ին հանդէս եկաւ յայտարարութեան մը, որուն մէջ մասնաւորապէս ըսուած է. «2016 թուականի Դեկտեմբերի վերջից Գաբրիլ Ծառուկեանի լիազօր անձանց նախաձեռնութեամբ սկսուեցին բանակցութիւններ Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հետ, որի հիմքում ընկած էր հետեւեալը՝ յառաջիկայ նախատեսուող դաշինքում քննարկուած է մեծ քաղաքական փոփոխութիւնները, որի հիմքում ընկած է քաղաքական առողջ համագործակցութեան, սոցիալական արդարութեան հաստատման, երկրում որակական փոփոխութիւններ կատարելու գաղափարները»:

ՄԴՀԿ-ն համաձայնուել էր միանալ այդ փոփոխութիւնին, որտեղ դաշինք կազմող ուժերը պէտք է լինէին ՄԴՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՌԱԿ-ը, ՀՀԾ-ն եւ Միասնութիւն շարժումը: Քաղաքական գոնսուլթացիաները ընթացել են բոլոր մակարդակներով՝ ընդհուպ մինչեւ Գ. Ծառուկեանի հետ, որի հետ անձամբ ձեռք է բերուել քաղաքական պայմանաւորուածութիւն բոլոր

Շար.ը էջ 4

«Միջազգային Ներումը» Դատապարտած է Լափշինի Արտայանձնումը

«Միջազգային Ներումը» (Amnesty International) իրաւապաշտպան կազմակերպութեան կողմէ տարածած հաղորդագրութեամբ կը դատապարտուի ինթըրնետային լրագրող Ալեքսանտր Լափշինի Պեյլաուսի կողմէ Ատրպէյճանին արտայանձնումը եւ պահանջելով՝ անյապաղ ազատ արձակել անոր:

Միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնը ընդգծած է, որ Ալեքսանտր Լափշինին կը սպառնան խոշտանգումներ, վատ վերաբերմունք եւ անարդար դատավարութիւն եւ համոզմունք յայտնած է, որ քրէական հետապնդումը անոր դէմ պէտք է դադրի:

Նշելով, որ Լափշինի կալանաւորուած էր Պեյլաուսիոյ կողմէ, Ատրպէյճանի պահանջով՝ Լեռնային Ղարաբաղ կատարած այցերուն համար, իրաւապաշտպան կազմակերպութիւնը միաժամանակ յայտնած է, որ «Amnesty International տեղեակ չէ Լեռնային Ղարաբաղ առանց իրենց թոյլտուութեան այցելելու համար անձանց դէմ

Շար.ը էջ 5

ՀՀ-ի Անկատար Խոստումները

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

2017 Աժ ընտրութիւնները առաջադրուածների վերջնաժամկէին մէկ շաբաթից էլ քիչ ժամանակ է մնացել, ու մինչ կը սկսուի մրցավազքը, փորձենք վերլուծել, թէ իշխող ՀՀ-ն այս հինգ տարիների ընթացքում որքանո՞վ է իրականացրել 2012թ. Աժ ընտրութիւններում իր ներկայացրած նախընտրական ծրագիրը: Ի վերջոյ, ՀՀ-ն 2012թ. ընտրութիւնների արդիւնքում Աժ-ում ձեւաւորեց բացարձակ մեծամասնութիւն եւ ի տարբերութիւն իր կողմից գործընկերների՝ չի կարող ասել, թէ իշխանութեան մէջ բաւարար ներգրաւածութիւն չի ունեցել՝ ծրագրերն ամբողջութեամբ իրականացնելու համար: Ընդհակառակը, ՀՀ-ն միակ կուսակցութիւնն է, որն ունեցել է բոլոր հնարաւորութիւնները՝ նախընտրական խոստումները կատարելու համար, առաւել եւս, երբ նախագահը, Աժ նախագահը, վարչապետը, նախարարների ու մարզպետների, համայնքապետների ու շատ այլ բարձրաստիճան պաշտօնեաների գերակշիռ մեծամասնութիւնը ՀՀ-ականներ են:

Եւ այսպէս՝ 2012թ. ընտրութիւններին ՀՀ-ն մասնակցեց «Հաւատանք, որ փոխենք» կարգախօսով՝ ներկայացնելով ծաւալուն ծրագիր: Միայն թէ այդ ծրագրում խոստումները շատ ընդհանրական էին, եւ թուային արտադրութեամբ՝ կոնկրետ արդիւնքների մասին խօսք չկար: Պատճառն էլ պարզ էր. նախորդ խորհրդարանական ու նախագահական ընտրութիւններում ՀՀ-ն կոնկրետ արդիւնքներ էր խոստացել, բայց այդպէս էլ չէր կարողացել ապահովել, ու այդ ողջ

ընթացքում ընդդիմութիւնը, հասարակութիւնը ՀՀ-ին ամէն յարմար առիթով լիչեցնում էր այդ խոստումները: ՀՀ-ն այս հինգ տարիների ընթացքում չի կատարել նաեւ 2012թ. տուած իր նախընտրական ծրագրի դրոյթները: Դատէք ինքներդ:

2012թ. ՀՀ ծրագրում նախաբանից յետոյ ՀՀ-ն առաջինը խոստացել էր «Ուժեղ եւ պաշտպանուած Հայաստան իւրաքանչիւրի համար»: Թէ իշխող ՀՀ-ն որքանով է իրագործել իր այս նախընտրական խոստումը, պարզ է ամէնքին: Բաւական է միայն լիչել ապրիլեան քառօրեայ պատերազմը, որի արդիւնքում եղան աւելի քան հարիւր զոհ, հարիւրաւոր վիրաւորներ եւ, վերջապէս, կորցրինք 800 հեկտար տարածք: Այդքանից յետոյ, թերեւս, անիմաստ է խօսել ՀՀ-ի այս խոստումները հակառակորդի հետ ուժերի հաւասարակշռութեան, հետախուզական կարողութիւնների, զօրացրուածների համար աշխատանքով ապահովելու եւ արտօնեալ ուսման հնարաւորութիւնների խոստումների մասին:

Ապրիլեան պատերազմից բացի՝ ՀՀ եւ ԼՂՀ սահմաններին պարբերաբար իրականացուող դիւրսիաները, միջազգային տարբերատեսանկերում ընդունուած բանաձեւերում եւ այլ փաստաթղթերում հակահայկական ձեւակերպումները ամենախօսուած ապացոյցն են այն բանի, որ ՀՀ նախընտրական ամենակարեւոր խոստումները չեն իրականացուել:

ՀՀ ծրագրի յաջորդ բաժինն այսպէս է վերնագրուած. «Հայաստանի միջազգային հեղինակութեան ամրապնդում»: Չորս տարի շարունակ եւրոասոցացման ուղղութեամբ քայլեր անելուց յետոյ եւ

մէկ գիշերում ԵՏՄ-ին անդամակցելու մասին Սերժ Սարգսեանի որոշման հետեւանքով թէ որքա՞ն է ամրապնդուել ՀՀ միջազգային հեղինակութիւնը, կարծում ենք՝ ներկայացնելու կարիք չկայ: Բաւական է միայն լիչեցնել, թէ ինչպէս էին եւրոպացի պաշտօնեաները նաեւ Սերժ Սարգսեանի հետ հանդիպումների ժամանակ ՀՀ իշխանութիւններին որակել անվստահելի, անկանխատեսելի գործընկեր: Մինչդեռ նոյն ՀՀ-ն իր նախընտրական ծրագրում խոստացել էր. «Եւրոպական միութեան հետ խորը եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի կնքումը հասցուելու է աւարտին: Բարձրացնելու ենք Ռուսաստանի Դաշնութեան հետ կնքուած առեւտրատնտեսական, ռազմական, էներգետիկ, գիտական, կրթական, մշակութային ոլորտներին վերաբերող պայմանագրերի իրագործման արդիւնաւետութիւնը»:

Այս տարիների ընթացքում չեն իրականացուել ՀՀ-ի տնտեսական բնագաւառի խոստումները եւս. «Ապահովելու ենք ֆինանսական կայունութիւն՝ ընդլայնելով ֆինանսական ծառայութիւնների շրջանակը եւ հասանելիութիւնը»: 2013թ. տարեվերջին դրամի կտրուկ արժեզրկումն ու տնտեսութեան մէջ դրան յաջորդած խուճապը լաւագոյնս ցոյց է տուեց, որ իշխանութիւններն ի վիճակի չեն ապահովել ֆինանսական որեւէ կայունութիւն, այլ ընդամենը արհեստականօրէն փորձում են պահպանել դրամի փոխարժէքը:

ՀՀ-ն նաեւ խոստացել էր. «Մեր տնտեսական քաղաքականութիւնն ուղղուած է լինելու միջին եւ փոքր պիզնեսի կայացման եւ զարգացման երաշխիքների

ստեղծմանը: Մենք պարտաւոր ենք ապահովել հաւասար մրցակցային պայմաններ եւ բացառել խոշոր պիզնեսի կողմից գերիշխող դերքի շարաշահումները»:

Եւ ի՞նչ. կարողացա՞ւ ՀՀ-ն ապահովել այս ամենը: Իհարկէ ոչ: Բաւական է միայն նշել, որ եթէ նախորդ տարիներին ինչ-որ աճ է արձանագրուել, ապա հիմնականում գիւղատնտեսութեան ոլորտում թուանկարչութեան շնորհիւ: Իսկ որ տնտեսութիւնը չի զարգացել, փաստում է վերջին երեք տարուայ ընթացքում պիւտձէի եկամտների թերակատարումը, փաստում է ներդրումների ծաւալների հետեւողական անկումը, փաստում է աղքատութեան մակարդակը, որ այդպէս էլ չի իջնում 30 տոկոսից, եւ, վերջապէս, դա փաստել է անձամբ ՀՀ առաջին փոխնախագահ, վարչապետ Կարէն Կարապետյանը, երբ Աժ ամբիոնից յայտարարեց. «Բաց, ազնիւ ասում եմ՝ մեր տնտեսութեան վիճակը չափազանց ծանր է»:

Յանուն արդարութեան նշենք, որ իր ծրագրային դրոյթներին մէկը ՀՀ-ն, այնուամենայնիւ, իրականացրել է: Խօսքը ամուր սփիւռք ունենալու խոստման մասին է. չէ՞ որ վերջին տարիներին ՀՀ-ից շարունակուել է ահազնացող արտագաղթը. միայն վերջին հինգ տարում մօտ 210 հազար ՀՀ քաղաքացի է մեկնել ՀՀ-ից եւ չի վերադարձել՝ այդպէս համալրելով եւ ուժեղացնելով հայկական սփիւռքը:

Այնպէս որ, ՀՀ-ն այդպէս էլ չի իրականացրել իր նախընտրական ծրագրի դրոյթները ու, չնաեւ սրան, փորձում է քաղաքացիներից քուէ ակնկալել: Իսկ միայն վերջինից փաստերը բաւարար են, որպէսզի քաղաքացիները մերժեն այս կուսակցութեանը: «ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Չի Մնացել Այլ Ելք. Կարեն Կարապետեանն Ասել Է Գինը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարութիւնն օրերս հրապարակեց տեղեկութիւն Հայաստանում 2017 թուականին սպասուող մօտ 460 միլիոն տոլարի ներդրումների մասին:

Փետրուարի 13-ին Եւրոպական պիզնէս ասոցիացիայի եւ Հայաստանում գործունէութիւն ծաւալող եւրոպական ընկերութիւնների ներկայացուցիչները հետ հանդիպմանը, որին մասնակցել է նաեւ Եւրամիութեան դեսպան Պյոտտր Սվիտալայի, Կարէն Կարապետեանը յայտարարել է կառավարութիւնում քննարկուած եւ իրատեսական համարուող ներդրումային 341 ծրագրի մասին, յայտարարելով, որ դրա արժէքը կը կազմի մօտ 3,2 միլիարդ տոլար: Կարապետեանը յայտարարել է, որ արդէն իսկ 2017 թուականի համար իրատեսական է դրանից 840 միլիոնի ծրագրերի մեկնարկը:

Փաստացի, կառավարութիւնը յայտարարել է Հայաստանում բարեփոխումների կամ իշխող համակարգի փոփոխութեան գինը՝ 3,2 միլիարդ տոլար:

Գործնականում դա Հայաստանում առկայ համակարգի տնտեսական հենքի փոփոխութեան արժէքն է, կամ պայմանական բնորոշմամբ՝ «զուգահեռ տնտեսութեան» կամ «զուգահեռ տնտեսական համակարգի» ձեւաւորման գինը, որի

միջոցով կարող է իրատեսական դառնալ ուժերի յարաբերակցութեան փոփոխութիւնը:

Ինչպիսին է լինելու կամ ինչպիսին կարող է լինել այդ համակարգը, այլ հարց է: Չկայ երաշխիք, որ այն իր որակներով ու հեռանկարներով երաշխաւորուած աւելի լաւը, առաջադէմը կամ արդիւնաւէտն է լինելու, քան ներկայիս գործող համակարգը: Թէեւ, գործնականում ներկայիս համակարգը պարզապէս սպառուած համակարգ է եւ որպէս օրգանիզմ ի վիճակի չէ լուծել գոյապահպանութեան խնդիրը գրեթէ մէկ միլիարդ աւելի հեռու քայլ ենթադրող որեւէ այլ խնդիր:

Որեւէ զուգահեռ համակարգ կամ բարեփոխում ունի գին, եւ ներկայիս կառավարութեան կամ Կարէն Կարապետեանի հաշուարկով, այդ գինը կազմում է 3,2 միլիարդ դոլար: Փաստօրէն, դրանից յետոյ նաեւ յայտարարուած է, որ գտնուել է 460 միլիոն տոլար, որն ըստ նախնական գնահատականի, կը ստեղծի մօտ 6000 աշխատատեղ: Եթէ հնարաւոր լինի թէկուզ մօտաւոր ճշգրտութեամբ հաշուարկել այդ 6000-ի մուտիւրի կատիւ էֆեկտը հանրային ընդգրկման իմաստով, ապա կը ստացուի մօտաւոր պատկեր, թէ գործնականում հանրութեան որքան մաս կը դրուի նոր կամ զուգահեռ տնտեսական համակարգի ներքոյ, ինչ ծաւալ կ'ընդգրկի այդ համակար-

գի սոցիալական հենքը:

Գործնականում այստեղ է Կարէն Կարապետեանի շանսը, եթէ նա իսկապէս ունի առկայ համակարգի հետ մրցակցութիւնը յաղթելու ցանկութիւն: Մրցակցութիւնից խուսափելու տարբերակ նա չունի՝ նա կամ կը դառնայ համակարգի հերթական զոհը, որի հաշուին առկայ համակարգը որոշակի ժամանակահատուածով կը լուծի գոյապահպանութեան խնդիրը, կամ կը կարողանայ կայացնել գուզահեռ համակարգի ձեւաւորման գործընթացը եւ այդ համակարգի յետագայ կառուցումը դարձնել «անշրջելի»:

Անբեկբայ է, որ Հայաստանի ներքին կեանքում այլ մրցակցային գործընթաց, որի հիմքում այլընտրանքային համակարգի ձեւաւորումն է, ներկայումս գոյութիւն չունի, գործնականում հանրային մակարդակում գնահատուած եւ մատուցուած չէ նաեւ այդ գործընթացի համար պահանջուող ռեսուրսային բազան, դրա աղբիւրները:

Որպէս շոշափելի ռեսուրս փորձ է արւում խաղարկել ընդամենը ազնուութիւնը, անկեղծութիւնը, կենսագրական մաքրութիւնը, ընդ որում առանց նոյնիսկ այդ ռեսուրսների ներդրման յստակ եւ հանրութեան համար կատարելի ներդրումային ծրագրի, որն ունի շոշափելի համակարգային թէկուզ ուրուագիծ:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՏԻԱԿ ԴԵՍՈՂԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷԱՉԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստորագրուեցաւ «Օհանեան-Րաֆֆի-Օսկանեան» Համաձայնագիրը



Րաֆֆի Յովհաննիսեան, Վարդան Օսկանեան եւ Սէյրան Օհանեան կը ստորագրեն ընտրական դաշինքի ստեղծման մասին փաստաթուղթը

Փետրուար 13-ին տեղի ունեցաւ «Ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանի, «Համախմբում» կուսակցութեան նախագահ Վարդան Օսկանեանի ու Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանի մասնակցութեամբ ընտրական դաշինքի ստեղծման մասին փաստաթուղթի ստորագրումը:

«Օհանեան-Րաֆֆի-Օսկանեան» անունը ստացած դաշինքը երեք ուժերու ներկայացուցիչներէն կազմուած խումբով կը մասնակցի յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն: Դաշինքի կազմին մէջ է նաեւ «Ժողովրդական կուսակցութիւնը» Տիգրան Կարապետեանի գլխավորութեամբ:

«Ժառանգութեան» փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան իր խօսքին մէջ նշեց՝ իրենք անհրաժեշտ կը համարեն փոխել գործող արատաւոր համակարգը:

«Ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեան նշեց. «Մենք այսօր մեկնարկն ենք տալիս նոր խորհրդաձայնի: Մենք ասում ենք այդ Հայաստանի ինքնիշխանութեան Հայաստանի ինքնիշխանութեանն ու Արցախի տարածքային ամբողջականութեանը»:

Րաֆֆի Յովհաննիսեանը յաջողութիւն մաղթեց միւս բոլոր

դաշինքներուն, նաեւ նշեց՝ այս իշխանութիւնը կ'ապրի իր վերջին օրը:

«Համախմբում» կուսակցութեան նախագահ Վարդան Օսկանեան ըսաւ. «Ես երկրորդում եմ Րաֆֆի Յովհաննիսեանի խօսքն ամբողջութեամբ: Այն, ինչ մենք ցանկացել ենք, հեռու է իրականութիւնից: Սա հազուադէպ առիթներէն է՝ երկրում իրավիճակ փոխելու»:

Վարդան Օսկանեանի պնդմամբ՝ ապացուցուած է, որ Հայաստանի զարգացման խոչընդոտած է գործող իշխանութիւնը:

Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան ըսաւ. «Ըստ հոլթեան ապրիլեան խորհրդարանական ընտրութիւնները լինելու են շատ կարեւոր ընտրութիւններ, երբ ձեւաւորուելու է իշխանութիւնը, եւ կարեւոր է, որ իւրաքանչիւր անձ մասնակցի դրան: Ազգային երաշխիքների ձեւաւորման հիմքում լինելու է մարդը, սահմանում կանգնած գինուորը, ուսուցիչը եւ այլն: Մենք կարեւորում ենք անվտանգութեան երաշխիքների բարձրացումը: Ամենամեծ թերութիւնը, որ գոյութիւն ունի՝ իշխանութեան ու մարդկանց միջեւ եղած անջրպետը, մենք փորձելու ենք վերացնել»:

«Ելք» Դաշինքի Ցուցակը Կը Գլխավորէ Էտնոն Մարուքեան



«Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Էտնոն Մարուքեան

«Ելք» դաշինքը Փետրուար 14-ին կայացած ներքին քուէարկութեան անմիջապէս յետոյ հրապարակեց յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն իր համամասնական ցուցակի առաջին եռեակի անունները: Ըստ այդ՝ դաշինքի ցուցակը կը գլխավորէ «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Էտնոն Մարուքեան, երկրորդ հորիզոնականին է «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Մարգարեան, ցուցակի երրորդ տեղն է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան վարչութեան անդամ Նիկոլ Փաշինեան:

«Ելք» դաշինքը նոր սերնդի դաշինք է եւ ունի առաջնորդներ, երեք կուսակցութիւնների առաջնորդները «Ելք» դաշինքի առաջնորդներն են համարուում», - յայտարարեց Մարուքեան:

«Ելք»-ի առաջնորդները քննադատեցին նախապէս իշխանութեան մէջ եղած, այժմ ինքզինք ընդդիմադիր հռչակած Սէյրան Օհանեանը, Վարդան Օսկանեանն եւ Գագիկ Ծառուկեանը:

«Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Էտնոն Մարուքեան, անհար համարեց, որ այս ուժերուն հետ իրենք կը համագործակցին ընտրութիւններէն յետոյ՝ փորձելով մեծամասնութիւն ձեւաւորել խորհրդարանին մէջ:

«Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Մարգարեան լիջեցուց, թէ Սէյրան Օհանեան եւ Գագիկ Ծառուկեան իշխանութեան մէջ «կամ լուռ էին, կամ աջակցող»:

Աւելին, ըստ Արամ Մարգարեանի, օրինաչափ է, որ Սէյրան Օհանեանի ու Վարդան Օսկանեանի դաշինքին միացաւ նաեւ Րաֆֆի Յովհաննիսեանը «կարծում եմ, որ այդ դաշինքը գաղափարական առումով շատ իրար մօտ են, շատ բնական եմ համարում, որ իրենք միասին են: Նաեւ կարծում եմ, որ իրենց մօտեցումները շատ մօտ են Հանրապետականին, եւ իրենք կարող են միաս-

նական մասնակցել: Առաւել եւս, որ, բացի «Ժառանգութիւնից», մնացած բոլորն էլ ինչ-որ ժամանակ պաշտպանել են Ռոպէրթ Քոչարեանին, եղել են նրա վստահուած անձը, նրա թիմի անդամը»:

«Քաղաքացիական պայմանագրի» ղեկավար անդամ Նիկոլ Փաշինեանի խօսքով. «Աւելի հաւանական է, որ նրանք հնարաւորութեան դէպքում Հանրապետականի հետ գոյալիցիա կը կազմեն: Եւ նրանք պէտք է քաղաքական դաշտում դեռ ապացուցեն, թէ իրենք ինչ նկատի ունեն, երբ որ ասում են, որ իրենք ընդդիմադիր են»:

Իսկ Գագիկ Ծառուկեանի հետ Հանրապետականի դէմ միաւորուելու հարցով Նիկոլ Փաշինեան ըսաւ. «Այն պահին, երբ պէտք էր իշխանափոխութիւնը տեղի ունենար, մենք էլ պատրաստ էինք այդ իշխանափոխութեանը աջակցել ցանկացած կարգավիճակում, իրենք ուղղակի թողեցին եւ հեռացան դաշտից: Ես չեմ ուզում ասել փախան: Հիմա մենք պէտք է երաշխիքներ ունենանք, որ նման իրավիճակում փախնողներ չեն լինելու»:

Էտնոն Մարուքեան յայտարարեց. «Մեր յայտը առաջին հերթին իշխանափոխութիւն անելն է: Դա մաքսիմալ ծրագիրն է: Նուազագոյն ծրագիրը, եթէ դա չստացուի, մենք լինելու ենք հակակշիռ վեցերորդ գումարման Ազգային ժողովում»:

Երթ Ի Պաշտպանութիւն «Հաց Բերողին» «Ազատ Արձակէք Մեր Լապշինին»

Փետրուար 14-ին Երեւանի Ազատութեան հրապարակէն մեկնարկեց երթ՝ ի պաշտպանութիւն «Հաց բերող» Արթուր Մարգարեանի, որ ձերբակալուած է Սամայ Ծռերու» անցեալ տարուայ Յունիսի գործողութեան մասնակիցներուն հաց հասցուցած էր:



Երեւանի մէջ երթ՝ ի պաշտպանութիւն «Հաց բերող» Արթուր Մարգարեանի

Երթի կազմակերպիչներն էին «Ո՛չ թաւանին» նախաձեռնութիւնը, որուն անդամներէն Մաքսիմ Մարգարեանը յայտարարեց, որ Արթուր Մարգարեանին ազատութեան գրկած են ընդամենը հաց տանելու համար, եւ խոշտանգման կ'ենթարկեն զինք: Երթի մասնակիցները կը վանկարկէին՝ «Ազատութիւն Հաց բերողին», «Սերժիկ, հեռացիր, Հայաստանը մոռացիր», «Մահ ռեժիմին»:

Երթի նախաձեռնողներից մէկը նշեց, որ այս օրերուն կը քննարկուի Լապշինի արտաքսնման հարցը, մինչդեռ մեր երկրին մէջ ալ կայ Լապշին՝ ի դէմս Արթուր Մարգարեանի, որ ռեժիմի զոհն է: Ան նաեւ զուգահեռ կատարեց Հա-

յաստանին յանձնուած ատրպէյ-ճանցիին հետ, որուն ինչպէս ցոյցի կազմակերպիչները ըսին՝ «առօք-փառօք պահում են», իսկ մեր հերոսներին դատում:

Երթին կը մասնակցէին «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ալեք Յնիգոմ շեանը, «Ժառանգութեան» անդամ Արմէն Մարտիրոսեանը, դերասանուհին Թամար Յովհաննիսեանը, Կարօ Եղնուկեանի կինը՝ Ռուզան Եղնուկեանը, Վարուժան Աւետիսեանի տիկինը եւ «Սասնա Ծռերու» անդամ Յովհաննէս Յարութիւնեանի մայրը:

Տալլաքեան Բացատրեց Օհանեանի Դաշինքի Հետ Համագործակցութիւնը Դադրեցնելու Պատճառները

Նախագահի աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալը յայտարարած է, թէ Օհանեանի գլխավորած դաշինքի նախընտրական ցուցակի ետեւ կանգնած է Լեւոնալին Ղարաբաղի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Պապայեան:

Համագործակցութեան այդ ձեւաչափը լքած՝ «Երրորդ հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Տալլաքեանի խօսքով, Պապայեան անձամբ իր հետ բանակցութիւններ վարած է՝ Փետրվար 6-ին ցուցակով այցելելով իրենց կուսակցութեան գրասենեակ: «Ես մերժել եմ Սամուէլ Պապայեանի առաջարկութիւնները», - ըսաւ Վիքթոր Տալլաքեան: Ըստ անոր, Սամուէլ Պապայեանի ցուցակի առաջին 10 թիւերուն մէջ եղած են միայն Վարդան Օսկանեանի «Համախմբում» եւ Րաֆֆի Յովհաննիսեանի «Ժառանգութիւն» կուսակցութեան ան-

դամներ, ցուցակը գլխավորած է պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանը: Ինքը՝ Տալլաքեան յայտնուած է 11-րդ տեղը:

Ան նաեւ յայտարարեց, որ այս ընթացքին կազմակերպած է Գագիկ Ծառուկեան-Սէյրան Օհանեան մի քանի հանդիպում, բայց «անարդիւնք»:

Վիքթոր Տալլաքեան դեռ որոշում չունի՝ մասնակցի՞ր թէ ոչ յառաջիկայ ընտրութիւններուն: Ամիսներ առաջ ան դուրս եկաւ իշխող Հանրապետական կուսակցութեան, հրաժարական տուաւ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալի եւ Ազգային ժողովի նախագահի պաշտօնական ներկայացուցիչ պաշտօններէն՝ յայտարարելով, թէ իշխանութեան հետ համագործակցութեան վերջին հորս տարինեւ ընթացքին ինք «բարեւ էր հաւաքում», հիմա արդէն «եկել է քարերը նետելու ժամանակը»:

ԼՈՒՐԵՐ

Փանամայի Սեշ Ձերբակալուած ԵՆ Mossack Fonseca-ի Երկու Յիմնադիրները



«Փանամական փաստաթղթերուն» մեջ յայտնուած Սիիրան Պողոսեան եւ Իլիամ Ալիե

Փանամայի իրաւապահ մարմինները ձերբակալած են օֆշորային ընկերութիւններու գրանցմամբ գրադող Mossack Fonseca իրաւաբանական ընկերութեան երկու հիմնադիրները: «Ռոյթըրզ» լրատուական գործակալութիւնը, չղում ընելով փանամայի դատախազութեան, փոխանցած է, որ ընկերութեան հիմնադիրներ Ռամոն Ֆոնսեկա եւ Եուրզէն Մոս կը մեղադրուին կաշառակերութեան եւ փողերու լուսցման գործերու մէջ առնչութիւն ունենալու մէջ:

Mossack Fonseca-ի անունը յայտնի դարձաւ շուրջ մէկ տարի առաջ, երբ ընկերութեան միլիոնաւոր փաստաթուղթերու արտահոսքը հիմք հանդիսացաւ «Փանամական փաստաթղթեր» անունը ստացած միջազգային հետաքննութեան համար: Պարզուեցաւ, որ Mossack Fonseca-ի հետ կապուած են բարձրաստիճան պաշտօնեաներ, այդ կարգին՝ 12 երկրի ղեկավարներ, անոնցմէ արժարժուած էին Ռուսիոյ ու Ատրպէյճանի նախագահներուն անունները: Հայաստանէն օֆշորային խաչտառակութեան կիզակէտին մէջ յայտնուեցաւ Դատական գործերու հարկադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայութեան այժմ նախկին ղեկավար Միհրան Պողոսեան:

Հայաստանէն միջազգային հետաքննութեան մասնակցած «Հետք» պարբերականը գրած էր, որ ԴԱՀԿ ծառայութեան ղեկավարի պաշտօնը գրադեցնող Պողոսեան բաժնետէր է Փանամա գրանցուած երեք ընկերութիւններու, որոնցմէ երկուքը կը հանդիսանան Հայաստան գրանցուած «Պեսթ ռեալթի» ՍՊԸ-ի բաժնետէրերը, իսկ այդ

ընկերութիւնը իրականացուցած էր անշարժ ու շարժական գոյքի գնահատում Պողոսեանի գլխաւորած ԴԱՀԿ-ի համար: Հետաքննութիւնը պարզած էր նաեւ, որ Հայաստանի գլխաւոր հարկադիր կատարողին պատկանող ընկերութիւնները հաշուեհամար բացած են զուիցերական դրամատուներէն մէկուն մէջ:

Պողոսեան հերքեց օֆշորային ապօրինի գործուէութեան առնչութիւն ունենալու մեղադրանքները: Երբ հայաստանցի մեծահարուստ պաշտօնեայի մայրաքաղաքում անսին փաստացի ապացուցներ հրապարակուեցան, Պողոսեան ութ տարի պաշտօնավարումէ յետոյ հրաժարական տուաւ՝ յայտարարելով, թէ կը ցաւի, որ իր անունը նոյն փաստաթուղթերուն մէջ յայտնուած է՝ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ընտանիքի կողմէն:

Մէկ ամիս անց քրէական գործ յարուցուեցաւ Քրէական օրէնսգրքի 310-րդ յօդուածի յատկանիշներով՝ «ձեռնարկատիրական գործունէութեան ապօրինի մասնակցելը», իսկ յարուցումէն շուրջ ութ ամիս անց Յատուկ քննչական ծառայութիւնը տեղեկացուց, որ Պողոսեանի վերաբերեալ գործը կարճուած է, քանի որ ապօրինի ձեռնարկատիրական գործունէութեան մասնակից ըլլալու հանգամանք է հիմնաւորուած:

Վարջերս, յայտնի դարձաւ, որ ԴԱՀԿ նախկին ղեկավարը յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն իշխող Հանրապետականի տարածքային ցուցակով պիտի առաջադրուի Երեւանի թւ 1 ընտրատարածքին մէջ:

ՍԴՅԿ-Ը Դադրեցուցած է Քննարկումները

Շարունակուած էջ 1-էն
հնարաւոր հարցերով:
ՄԴՀԿ-ն մասնակցելու էր 8 ռեյտինգային թեկնածուներով՝ այդ թուում ԲԱՅԱՌԱՊԷՍ սեփական միջոցներով: ՄԴՀԿ համաշխարհային ղեկավարութիւնն այս պայմաններով պատրաստ է եղել բարոյական աջակցութիւն ցուցաբերել

դաշինքին»:
Կուսակցութիւնը յայտարարած է, որ մի քանի օր է, սակայն, բոլոր հնարաւոր առումներով միակողմանիօրէն խախտուած են քաղաքական պայմանաւորուածութիւնները, որուն պատճառով Հնչակեան կուսակցութիւնը դադրեցուցած է Գագիկ Մառուկեանի գլխաւորած միաւորման հետ քննարկումները:

Ֆրանսայի Դեսպան. ԵՄ-ը Հայաստանի Սեշ Կակնկալէ Լաւագոյն Ընտրութիւններ

Եւրամիութիւնը կը ցանկայ եւ կ'ակնկալէ, որ Ապրիլ 2-ի ընտրութիւնները Հայաստանի մէջ կայանան լաւագոյն մակարդակով, որուն համար ընտրութիւններու գործընթացին կատարուած է 7 միլիոն եւրոյի ներդրում: Լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտարարեց Հայաստանի մէջ Ֆրանսայի արտակարգ եւ լրագոր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարփանթիէ:

Ըստ անոր, ընտրութեան հանդէպ վստահութեան մթնոլորտը ժողովրդավարութեան կարեւորագոյն սկզբունքներէն է: Թէեւ Ֆրանսիայի կառավարութիւնը առանձնաբար ներդրում չէ ըրած, սակայն, դեսպանը յիշեցուցած է, որ Եւրամիութեան ընդհանուր պիւնտէր 18 տոկոսը Ֆրանսայի հարկատուներու գրպանէն ձեւաւորուած է:

Բացի այդ, Ֆրանսա 20 միլիոն տոլարի օժանդակութիւն տրամադրած է Հայաստանի զարգացման ծրագրերուն:

«Տակաւին մի քանի կէտեր կան, որոնց վերաբերեալ Հայաստանն ու Եւրամիութիւնը համաձայնութեան պիտի գան, բայց, ընդհանուր առմամբ, բանակցութիւնները բարենպաստ պայմաններով կ'ընթանան: Իմ կարծիքով, շուտով արդէն կը ստորագրենք երկու կողմերուն բաւարարող համաձայնագիր», - յայտարարեց Ֆրանսայի դեսպանը:

Անոր խօսքով, նոր համաձայնագիրը «կարեւոր թէ՛ Հայաստանի, թէ՛ Եւրամիութեան տեսանկիւնէն»: Ֆրանսայի դեսպանը տեղեկ չէ՝ արդեօք մօտ ապագային հնարաւոր է Հայաստանի քաղաքացիներուն համար ԵՄ երկիրներ մուտքի վիզայի անհրաժեշտութեան չեղարկում, ինչպէս եղաւ Վրաստանի պա-



Ֆրանսայի դեսպան Ժան-Ֆրանսուա Շարփանթիէ

րագային: «Ամէն ինչ բանակցութիւններէն կախուած է», - ըսաւ ան:

Միևնակի խումբի համանախագահ Ֆրանսայի դեսպանը չըրջանցեց նաեւ Ղարաբաղի թեման, նշելով, որ ներկայ իրավիճակը, երբ շփման գիծին շարունակ գոհեր կան, չի կրնար ընդունելի ըլլալ հակամարտող կողմերէն որեւէ մէկուն համար:

Ժան-Ֆրանսուա Շարփանթիէ խօսքով՝ Միևնակի խումբը ջանքեր չի խնայեր կողմերը կրկին բանակցային սեղան վերադարձնելու համար: Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզի, Փետրուար 8-ին յայտարարած է, որ պատրաստ են իրենց երկիրը ընդունիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները կամ արտաքին գործոց նախարարները, երբ քննարկելու համար կուտակուած շոշափելի նիւթ ըլլայ:

Այնուամենայնիւ, ըստ Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանի, հակամարտութեան կարգաւորման համար անհրաժեշտ նախապայմանը կողմերու քաղաքական կամքն է:

ԱՄՆ Պատրաստ է Աջակցիլ Կաշառակերութեան Դէմ Ուղղուած Ձանքերուն

Վարչապետ Կարէն Կարապետեան ընդունած է Հայաստանի Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Միլսին:

Ըստ կառավարութեան պաշտօնական կայքէջին, կողմերը քննարկած են Հայաստանի կառավարութեան հակակաշառակերութեան քաղաքականութեան եւ կաշառակերութեան դէմ պայքարի ուղղութեամբ համագործակցութեան վերաբերող շարք մը հարցեր:

Վարչապետը անդրադարձած է մինչ օրս ՀՀ կառավարութեան նախաձեռնած օրէնսդրական բարեփոխումներուն, ընդունուած որոշումներուն, կաշառակերութեան դէմ պայքարի խորհուրդի կատարած աշխատանքներուն, ինչպէս նաեւ յառաջիկայ ընելիքներուն:

«Կողուպցիայի դէմ պայքարին ուղղուած քայլերը յաջողելու եւ հետեւողականութիւն ապահովելու գործում մեծապէս կարեւորում են հասարակութեան ակտիւ քաղաքացիական դիրքորոշումը, կառավարութիւն-հասարակութիւն յետադարձ գործուն կապը եւ գործընկեր կառուցների հետ կառուցողական համագործակցութիւնը: Յանկանում են եւս մէկ անգամ ընդգծել, որ կառավարութիւնը բաց է քննարկումներին եւ առաջարկութիւններին համար», - ըսած է վարչապետը:

Ռիչըրտ Միլս նշած է. «Հայաստանին կաշառակերութեան դէմ



Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Միլս

պայքարին աջակցիլ ըլլալու Միացեալ Նահանգներու յանձնառութեան վերաբերեալ կասկած չի կրնար ըլլալ: Մենք պատրաստ ենք աշխատիլ Հայաստանի պետական կառուցներուն հետ, որոնք կաշառակերութեան դէմ պայքարելու իրական կամք կը դրսեւորեն»:

Քննարկուած են նաեւ պաշտօնատար անձանց ապօրինի հարստացման քրէականացման, կաշառակերութեան յանցագործութիւններու քննութեան որակի բարձրացման եւ այլ ուղղութիւններով մշակուած օրէնսդրական նախաձեռնութիւններուն առնչուող հարցեր:

Կարէն Կարապետեան եւ Ռիչըրտ Միլս մտքեր փոխանակած են նաեւ հայ-ամերիկեան տնտեսական համագործակցութեան ուղղութիւններու եւ առաջնահերթութիւններու շուրջ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱԳՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Ֆրանսայի Նախագահ - «Թուրքիա Պետք է Շարժի Հայոց Ցեղասպանութեան Ծանաչման Ուղղութեամբ»



Ֆրանսա պէտք է աջակցի Հայոց ցեղասպանութեան ճանաչման բոլոր նախաձեռնութիւններուն, այդ կարգին եւ Թուրքիա, որ ի վերջոյ պէտք է շարժի ճանաչման ուղղութեամբ: Ինչպէս հաղորդած է «Արմէնփրես», նման յայտարարութեամբ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւնները համակարգող խորհուրդի տարեկան ճաշկերոյթի ընթացքին հանդէս եկած է Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ:

Ֆրանսայի ղեկավարը ընդգծած է նաեւ Գերմանիոյ Բոննդեսթագի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման կարեւորութիւնը եւ այս հարցով շեշտած Բոննդեսթագի նախագահ Նորբերտ Լամերտի եւ ծագումով Թուրք պատգամաւոր ձեմ Օզտէմիրի ղերակատարութիւնը: «Դուք մշտապէս տարբերակում դրած էք այս հարցով թրքական պետութեան եւ Թուրք ժողովուրդի միջեւ, եւ դուք ճիշդ էք», - ըսած է Ֆրանսայի նախագահը: Այս առնչութեամբ Օլանտ չի-

շատակած է Թուրքիոյ խորհրդարանի հայագրի պատգամաւոր Կարօ Փայլանի համարձակութիւնը այդ կառուցին մէջ Հայոց ցեղասպանութեան հարցը բարձրացնելու հարցով: Անդրադառնալով Թուրքիոյ զարգացումներուն՝ Օլանտ չիշատակած է, որ այս տարի կը լրանայ Հրանդ Տինքի սպանութեան 10 տարին, որուն այրիին Ֆրանսայի նախագահը հանդիպած էր Թուրքիա կատարած այցի ընթացքին:

«Այսպիսով, որն է մեր՝ Ֆրանսայի պարտականութիւնն այս հարցով: Մենք պէտք է աջակցինք Ցեղասպանութեան ճանաչման օժանդակող բոլոր նախաձեռնութիւններուն, ուրկէ որ գան, ինչպիսին ալ ըլլան: Եւ կարելոր է, որ այս հարցը շարունակուի բարձրացուիլ Թուրքիոյ մէջ, որ պէտք է շարժի ճանաչման ուղղութեամբ: Այս հարցը առաջ մղելու հարցով բազմաթիւ այլ երկիրներ մեզ հետ են», - նշած է Օլանտ:

Լրագրող Հասան Գեմալ 1 Տարի 3 Ամիս Ազատազրկման Դատապարտուած է

Պոլսոյ դատարանը յայտնի թուրք լրագրող, հրապարակախօս Հասան Գեմալին դատապարտած է 1 տարի 3 ամիս ազատազրկման, սակայն պատիժը յետաձգուած է անյայտ պատճառով: Լսող թրքական «Dogan» լրատուական գործակալութեան ձեմալը մեղադրուած է 2016-ին գրած յօդուածներէն մէկուն մէջ «ահաբեկչական կազմակերպութեան օգտին քարոզչութիւն ընելու» մէջ: Դատարանը վճիռ հրապարակելէ առաջ ձեմալին տուած է վերջին խօսքի իրաւունք: Ան մասնաւորապէս ըսած է.

«47 տարուայ լրագրող եմ: Մինչ օրս իմ կողմէ գրուած յօդուածներու եւ գիրքերու համար այս կերպ չեմ մեղադրուած: Երբեք չեմ պաշտպանած ահաբեկչութիւնը: Միշտ պաշտպանած եմ խաղաղութիւնը: Լրագրութիւնը յանցանք չէ: Այն հասարակութեան մէջ, ուր լրագրութիւնը յանցանք կը համարուի, չկան ազատութիւններ,



իրաւունք եւ ժողովրդավարութիւն»:

Աղբիւրը կը նշէ, որ նոյն դատարանին մէջ Հասան Գեմալի դէմ եւս դատական գործ մը բացուած է, ուր լրագրողին կը սպառնայ մինչեւ 8 տարուայ ազատազրկում: Այդտեղ նոյնպէս ձեմալը կը մեղադրուի «ահաբեկչական կազմակերպութեան քարոզչութիւն ընելու մէջ»:

«Միջազգային Ներումը» Դատապարտած է

Շարունակուած էջ 1-էն
ատրպէյճանական իշխանութիւններու կողմէ եղած արտայայտման դիմումներու այլ դէպքերու: Այդուհանդերձ, կան բազմաթիւ անհատներ, որոնք այցելած են այդ տարածք առանց ատրպէյճանական

իշխանութիւններու թոյլտուութեան եւ յայտնուած են Ատրպէյճանի «սեւ ցուցակին մէջ»:

Միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնը համոզմունք յայտնած է, որ գրողի արտայայտմամբ եւ անոր առաջադրուած մեղադրանքները կապուած են առաջին հերթին

Փարիզի Քաղաքապետը Պիտի Պարգեւատրել Կարօ Փայլանը

Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի տարեկան ճաշկերոյթին ընթացքին, Փարիզի քաղաքապետ Անն Իտալիօ իր աջակցութիւնը յայտնած է Հայաստանի բոլոր բարեկամներուն, որոնք վտանգուած են աշխարհի մէջ:

«Նուվել տ'Արմէնի» կը հաղորդէ, որ Փարիզի քաղաքապետը նաեւ յայտարարած է, թէ կը պատրաստուի քաղաքին շքանշանը յանձնելու Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլանին:

Իր ելոյթին մէջ, Իտալիօ անդրադարձած է նաեւ Երեւան կատարած իր այցին: «Շատ քիչ կը պատահի, որ այլ քաղաքի մը մէջ նման յստակութեամբ մշակոյթի զգացողութիւն ունենամ», նշած է Իտալիօ: Ան միաժամանակ շեշտած է, որ ցնցուած էր Երեւանի արդիականութեամբ, մասնաւորապէս՝



ԹՈՒՄՕ կատարած իր այցին: «Երբ այստեղէն մեկնեցայ, կը մտածէի, թէ ինչ կրնայ տալ Փարիզը Երեւանին. վերադառնալու ժամանակ կը մտածէի, թէ ինչպէ՛ս կրնայ Երեւանը իր նորարարական գաղափարները փոխանցել Փարիզին», ամփոփած է Իտալիօ:

Ֆրանքֆոն Երկիրներու 4000 Պատուիրակներ Հայաստան Պիտի Ժամանց

ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանի գլխաւորութեամբ կառավարութեան հետ տեղի ունեցած է Ֆրանսախօս պետութիւններու եւ կառավարութիւններու ղեկավարներու 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման եւ իրականացման միջգերատեսչական յանձնաժողովին անդրանիկ նիստը: Այս մասին կը հաղորդէ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան մամուլի վարչութիւնը:

ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալպանտեան նշած է, որ Հայաստանի մէջ 2018-ին պիտի կազմակերպուի Ֆրանսախօս երկիրներու գագաթնաժողովը եւ մեր երկիրը երկու տարի ժամկէտով պիտի ստանձնէ այս խորոշագոյն՝ 84 անդամ, գուգորդուած եւ դիտորդ երկիրներ ու կառավարութիւններ ընդգրկող կառուցին նախագահու-

թիւնը: ԱԳ նախարարին խօսքով՝ Հայաստանը առաջին անգամ է որ պիտի իրականացնէ այս կարգի բարձր մակարդակի, ծաւալի եւ միջազգային ընդգրկուածութեամբ ձեռնարկ: Կ'ակնկալուի, որ գագաթնաժողովին մասնակցին շուրջ հինգ տասնեակ պետութիւններու եւ կառավարութիւններու ղեկավարներ:

Կ'ակնկալուի հարիւրէն աւելի պատուիրակութիւններու ժամանումը, ընդհանուր հիւրերուն քանակը պիտի հասնի մինչեւ 4000 մարդ: Երկօրեայ գագաթնաժողովի մեկնարկէն երեք օր առաջ պիտի կայանայ արտաքին գործոց նախարարներու համաժողով:

Վարչապետ Կարապետեան կարելոր համարած է մեր երկրին մէջ նման ծաւալով ձեռնարկի բարձր մակարդակով կազմակերպումը:

Ֆրանսացի Դատաւորը Մերժել է Ատրպէյճանի Հայոց Ընդդէմ Արա Թորանեանի Եւ Ֆրանսացի Պատգամաւորի

Ատրպէյճանը հայց է ներկայացրել Ֆրանսական դատարան, ընդդէմ Ֆրանսացի պատգամաւոր Ֆրանսուա Ռոշըլուանի եւ «Նուվել դ'Արմէնի» ամսագրի տնօրէն Արա Թորանեանի: Ֆրանսացի պատգամաւոր, Ֆրանսա-Հայաստան բարեկամութեան պատգամաւորական խմբի ղեկավար Ռոշըլուանը 2015-ին յայտարարել էր. «Ատրպէյճանը գործում է որպէս ահաբեկչական երկիր», իսկ պատգամաւորի խօսքերը հրապարակել է «Նուվել դ'Արմէնի»-ի կայքը՝ 2015թ.-ի Սեպտեմբերի 28-ին:

Ինչպէս տեղեկանում ենք Փարիզից, Ֆրանսացի դատաւոր Անն դէ Պինյոնը չեղեալ է յայտարարել Ատրպէյճանի հայցը, այն ձեւակերպումով, որ օրէնքի շրջանակներում Ատրպէյճանը չի ընկալում որպէս մասնաւոր անձ կամ անձանց խումբ, այլ ընկալում է որպէս իրաւաբանական անձ՝ ուստի Ատրպէյճանի բողոքը համարուել է անընդունելի: Ֆրանսացի դատաւորի կողմից հայցի չեղ-

եալ համարումը Ֆրանսայում մամուլի ազատութեան համար բաւական լաւ նորութիւն են համարում:

Ֆրանսուա Ռոշըլուան, չնայած իր պատգամաւորական անձեռնմխելիութեանը անձամբ է ներկայացրել դատարան եւ հաստատել նախկինում հնչեցրած խօսքերը. «Ես դա ասել եմ նախորդ տարուայ ռազմական ագրեսիան նկատի ունենալով, որն այսօր, ցաւօք, վերածել է արիւնալի իրակասութեան: Իմ փաստաբան Սեւակ Թորոսեանի հետ ես որոշեցի դիմել դատարան՝ կանգնեցնելու համար ոտնահարուած «պատուով» օտար հանրապետութիւնների շրջանում տարածուած նորաձեւ միտումը՝ իրենց անհատ ներկայացնելու հակառակութիւնը»:

«Արեւելք»-ի հաղորդմամբ, Արա Թորանեանը նշել է, որ քննութիւնը դեռեւս ամբողջութեամբ աւարտուած չէ, բայց տեղի ունեցածն արդէն կարելի է յղթանակ համարել:

անոր հրապարակումներուն հետ: Amnesty International շեշտած է նաեւ, որ արտայայտման լիակշիւնին՝ Պելաուուսի իշխանութիւն-

ները խախտած են մարդու իրաւունքներու միջազգային օրէնսդրութեամբ սահմանուած իրենց պարտաւորութիւնները:

«ԱՄԷՆ ԸՆՏՐՈՒԹԻՆԻԿ 3 Ետոյ Մարդիկ Արտագաղթում են»



«Ամէն ընտրութեան յաջորդող շրջանում Հայաստանում արտագաղթի զգալի բարձրացում է լինում», - այսօր լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ ազգագրագէտ Հրանուշ Խառատեան:

Տիկին Խառատեան որակական հետազոտութիւն կայացուցած է՝ խորացուած գրոցներ ընելով որոշակի խումբի մարդկանց հետ. «Կարող եմ ասել, որ այն աշխատանքը, որի համար արտագաղթում են, շատ էական ազդեցութիւն չի ունենում կենսամակարդակի վրայ, մարդիկ փախչում են անյուսուցիչ, իրաւական վիճակից, իրաւունքի սեղմելու կիրառումից», - ըսաւ ան:

Ազգագրագէտը, ուսումնասիրելով 2011-ի մարդահամարի տուեալները, հետաքրքիր դիտարկում ըրած է. «39-49 տարեկանների խումբը 19-29 խմբի համեմատ մինչեւ 42 տոկոս պակաս է: Սա շատ մեծ եւ ծանր թիւ է, ինչը խօսում է, որ կենսափորձով, կաշուն, հմտութիւն, գիտելիք ունեցող մարդկանց պակաս ունենք, այսինքն՝ որակական պակասի մասին է խօսում»

երկրում»:

Քննարկման ներկայ՝ ժողովրդագիր Ռուբէն Եգանեան աւելցուց, որ մեր երկրի ներքաղաքական վիճակը հիմնական կաշուն է, իսկ արտագաղթը պայմանաւորուած է աւելի շատ Ռուսիոյ առկա իրավիճակէն. «Քանի որ Ռուսաստանն է հանդիսանում միկրացիոն հիմնական գործընկերը: Կան արտագաղթի վերաբերեալ տարբեր տուեալներ, սակայն դրանցից ոչ մէկը իրականութեանն այնքան էլ չի համապատասխանում, քանի որ չենք կարողանում իրականում չափագրել, որովհետեւ մեր միկրանթները չեն հետեւում պետական կարգին, որը նախատեսուած է միկրացիոն տեղափոխումների համար»:

ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամի «Օժանդակութիւն բնակչութեան հարցերով քաղաքականութիւններու իրականացման» ծրագրի համակարգող Աննա Յովհաննիսեան նշեց, որ արտագաղթը տարիքային խումբերու մէջ մեծ խեղման բերած է, որուն արդիւնքով՝ Հայաստանի մէջ տարեցներու թուի աճ գրանցուած է:

Բողոքի Ցոյց՝ ՀՀ-ի Պելառուսիոյ Դեսպանատան Առջեւ



Ալեքսանտր Լափշինին Ատրպէյճանին արտայանձնելու դէմ բողոքող մի քանի տասնեակ քաղաքացիներ այսօր պահանջներ հնչեցուցած էին Պելառուս դեսպանատան առջեւ: «Հետ կանչել Պելառուսում Հայաստանի դեսպանին», «փակել Հայաստանում այդ երկրի դեսպանատունն ու սառեցնել դիւանագիտական յարաբերութիւնները Մինսկի հետ» եւ այլ կոչերով:

Լեւոնային Ղարաբաղի դրօշներու ծածանումներով ու բողոքի վանկարկումներով ուղեկցուող ցոյցը, որուն նախաձեռնողը «ԵԼՔ» դաշինքն էր, տեւեց մօտ 30 վայրկեան: Կոտայքի մարզի Առինջ գիւղի ծայրամասը գտնուող՝ Պելառուս դեսպանատունը հսկուած էր բազմաթիւ ոստիկաններու կողմէ: Ցոյցը աւարտեցաւ առանց միջադէպեր: Ցուցարարներն, չյաջողեցան հանդիպիլ դեսպանին հետ՝ իզոյր Նագարուկը տեղը չէր: Ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեան դեսպանատան աշխատակցին հասկնալի [ուսերէն] լեզուով

փոխանցեց քաղաքացիներու պահանջը:

Պելառուս դեսպանատան առջեւ բողոքի ցոյց իրականացնող ընդդիմադիրները հայաստանեան իշխանութիւններէն յատկապէս պահանջած էին կոշտացնել Պելառուսիոյ հանդէպ քաղաքականութիւնն ու Մինսկէն ետ կանչել Հայաստանի դեսպան Արմէն Խաչատրեանը: «Արցախ այցելած ու նրա առօրեան նկարագրող բլոգերին կալանաւորելով, Ատրպէյճանը Լեւոնային Ղարաբաղը միջազգային լրատուամիջոցներից մեկուսացնելու նախադէպ է ստեղծում», - յայտարարեց պատգամաւոր Էտմոն Մարուքեան:

Իսրայէլի ու Ռուսիոյ քաղաքացի՝ 40-ամեայ Ալեքսանտր Լափշինին Ատրպէյճանին արտայանձնումը, ըստ «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանի, ի ցոյց կը դնէ նաեւ Ռուսիոյ անգործութիւնը. երկիր, որուն Հայաստանը իր անվտանգութեան երաշխաւորը կը համարէ:

պարտքի նման սրընթաց աճը, ալլել՝ վարկային միջոցներու վատնումը: «Մեր պետական պարտքը երկու տարի յետոյ կ'ունենայ այն-

պիսի սպասարկման կարիք, որը աւելի շատ է, քան պաշտպանութեան ծախսերը», - ըսաւ տնտեսական մեկնաբանը:

Հայաստանի Պետական Պարտքը Վերջին 8 Տարիներուն Եռապատկուած է

Այս տարի եւս Հայաստան կը շարունակէ կուտակել մեծածաւալ պարտքեր. ֆինանսներու նախարար Վարդան Արամեանի խօսքով՝ 2017-ին պետական պարտքը կ'աւելնայ մօտ 350 միլիոն տոլարով՝ հասնելով 6 միլիարդ 250 միլիոն տոլարի:

Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներով, այս տարուան Յունուար 1-ին Հայաստանի մշտական բնակչութեան թիւը կազմած է 2 986 500: Հաշուի առնելով այս հանգամանքը՝ յստակ է, որ իւր բնաբանչիւրիս պարտաւորութիւնը պիտի կազմէ աւելի քան 2092 տոլար:

Ֆինանսներու նախարարութեան տուեալներով, 2008-2016-ի ընթացքին Հայաստանի պետական պարտքը աճած է աւելի քան 3 անգամ (2008-ի պետական պարտքը 1 միլիարդ 906 միլիոն տոլար էր, 2016-ին՝ 5 միլիարդ 942 միլիոն):

«Ըստ մարման կրաֆիքի՝ ամենամեծ խնդիրը այդ եւրոպարտատոմսերն են, որ թողարկուել են 2013 թուականին եւ պէտք է մարուեն 2020 թուականին: Այսինքն՝ 500 միլիոն: Կը նայենք մեր կանխիկ հոսքերին, հնարաւոր է՝ 200 կամ 100 միլիոն վերցնենք, մարենք, մնացածը նետենք աւելի հեռու», - պարզաբանեց Վարդան Արամեան:

Տնտեսական մեկնաբան Հայկ

Գէորգեանի խօսքով, խնդիր է ոչ միայն Հայաստանի պետական

MARTIAL ARTS - ORGANIZED by

GAIDZ YOUTH ORGANIZATION

MASTER SEVAK HAKOBYAN - 4th DAN
 INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS
 WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

➤ **MARTIAL ARTS**
 ➤ **SELF-DEFENSE**

SEPARATE GROUPS: MEN
 WOMEN
 CHILDREN
 PEOPLE WITH DISABILITIES

❖ **FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS**
 ❖ **OFFICIAL OPENING & DEMONSTRATION FRIDAY, JANUARY 20, 2017, AT 5:30 PM**
 ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
 For registration and info contact Gaidz Youth Organization: 626-926-7224; email: info@gaidz.org

Instagram @Gaidzyo; Facebook Gaidz Youth Organization; Twitter @GaidzYouth

25-ԱՄԵԱԿԸ ՀԱՅ ՄԱՐՏՈՒՆԱԿ ԲԱՆԱԿԻՆ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Վերջերս Հայաստանի եւ Արցախի մէջ տօնուեցաւ հայոց ներկայ բանակի կազմաւորման 25-ամեակը: Արցախը ազատագրող ազատամարտիկները 28 Յունուար 1992-ին, սպարապետի կոչումին արժանի վազգէն Սարգսեանի գլխաւորութեամբ, ստեղծեցին ու կազմաւորեցին պաշտօնական բանակը Հայաստանի: Եւ այն օրէն ասդին մեր բանակը դարձաւ աշխարհի տարածքին ապրող ամէն մէկ հայու աչքին լոյսը եւ հպարտութեան աղբիւրը:

21 Սեպտեմբեր 2016-ին, Հայաստանի անկախութեան 25-ամեակի տօնակատարութեան օրը, ներկայ ըլլալով այդ բանակի տողանցքին Երեւանի Հանրապետութիւն հրապարակին վրայ, աննախընթաց զգացումներով բոցավառուեցայ՝ երբ տեսայ հայրերու ու մայրերու խումբեր, որոնք իրենց մանուկ զաւակները ուսերնուն վրայ շալկած՝ եկած էին հայրենասիրութեան ու ազգասիրութեան կողքին «բանակասիրութեան» դաս տալու այդ մանուկներուն:

Ազգային բանակ կոչուելու բոլոր տուեալները ամբողջացնող հայոց բանակը՝ կը վայելէ սէրն ու գուրգուրանքը ամէն գիտակից հայու: Միւս սրբութիւններուն՝ Մասիսի ու էջմիածնի համագործընթացութիւն դարձած է հայ բանակը: Ապրիլեան քառօրեայ պատերազմէն ետք, իր մարտունակ զինուորներու սխրագործութեան առջեւ ամօթահար դարձան (արդեօ՞ք) բոլոր անոնք, որոնք բարձր տեղեր նստած՝ մոռցած էին կարծէք կանգնել պատասխանատուութեան անարատ շարքերուն վրայ:

Ամօթ եւ հազար ամօթ բոլոր անոնց, որոնք նիւթական տարբեր շահերէ տարուած եւ կամ պատասխանատուութեան զգացումէ պարպուած՝ կռնակէն կը հարուածեն մեր ժողովուրդի խոնարհ ընտանիքներու զաւակները, որոնք կը պատուեն մեր ազգը յաջա ուրիշին եւ օտարին՝ իրենց մարտունակութեամբ եւ տուն ու ընտանիք պաշտպանելու զոհաբերութեամբ:

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր ծայրայեղութիւնը, իր ազգայնական ու կրօնական երեսներով, ստեղծած է ատելութիւն սերմանող վիճակ: Ծայրայեղութիւնը միշտ եղած է խումբ մը մարդոց քաղաքական շահերու միջոց՝ ի վնաս մարդկութեան մեծամասնութեան շահերուն: Եւ դժբախտաբար, ծայրայեղութեամբ անած եւ ուռճացած

վիշապը ընդհանրապէս կը սեղմէ ու կը փաթթուի տկարի եւ փոքրամասնութիւններու վրէժին: Հայը, իր հափով ու ծաւալով, Հայաստանի մէջ աւելի տկար է գինք շրջափակող ուրիշէն եւ փոքրամասնութիւն կը նկատուի Սփիւռքի իր գտնուած ամէն տեղի մէջ: Հետեւաբար, պէտք ունինք որակաւոր հզօր բանակի մը, որ մարտունակութեան կողքին ունենայ մեր ազգի հանճարեղ մտքին թիկունքը, որ պէսզի անոր կատարած հնարքներով եւ նորարարութիւններով փամփուշտ դառնայ ուրիշի սուրին դէմ եւ ունիք դառնայ ուրիշի փամփուշտին դէմ: Մարտունակ բանակի որակաւոր ըլլալը վստահաբար կ'ապահովէ անվտանգութիւնը մեր ժողովուրդին՝ գինք շրջափակող մեծէն եւ զօրաւորէն: Իսկ ինչ կը վերաբերի սփիւռքահայ փոքրամասնութիւններուն՝ աշխարհի ամէն կողմ կայք հաստատած եւ խաղաղ քաղաքական վիճակներու մէջ աճած, բարգաւաճած կամ յաջողած, պէտք է անոնք ըլլան միշտ կողքին անոնց, որոնք կը պայքարին ծայրայեղութեան դէմ, ըլլայ ան կրօնական կամ ազգայնական, որովհետեւ ծայրայեղին ատելութեան հրդեհին եւ հոսանքին առաջին գոհերը կը դառնան միշտ փոքրամասնութիւնները, որոնք կրնան ըլլալ քրիստոնեայ եւ ոչ-քրիստոնեայ՝ իսլամ մեծամասնութեան մէջ, կամ իսլամ մեծ ոչ-իսլամ՝ քրիստոնեայ մեծամասնութեան մէջ: Ահա թէ ինչո՞ւ կը զարմանամ ամէն անգամ, երբ կը լսեմ շուրջս գտնուող հայու մը լեզուէն նախագահ Թրամփի ի նպաստ արտայայտութիւն. ան, որ իր ծայրայեղ ազգայնական ու կրօնական դիրքորոշումներով եւ յայտարարութիւններով արդէն աշխարհի ամէն կողմ վախի ալիքներ յառաջացուցած է եւ անհանդուրժողութեան մթնոլորտ ստեղծած իր իսկ երկրին մէջ:

Նախագահ Թրամփ իր նման միլիտարատէր հարուստները իշխանութեան գլուխ բերելով՝ կը ստեղծէ մթնոլորտ մը, որուն մէջ անհանգիստ կը զգան բոլոր անոնք, որոնք վերջին երեսուն տարուան ընթացքին եղան գոհերը այդ հարուստներու ընկերութիւններուն կողմէ կիրարկուած Reagonomics կոչուած անարդար տնտեսական քաղաքականութեան: Հարուստին եւ աղքատին միջեւ ատենք կար բախտաւոր միջակ դասակարգ մը, զոր Թրամփի գործակից հարուստները եւ անոնց ընկերութիւնները անգործ դարձուցին: Իր խաբուսիկ արտայայտութիւններով անոնց

ՔԱՂԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԻՏԱՐԿՄԱՆ

Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակաշառակերութեան կեդրոնը պիտի դիտարկէ վարչական աղբիւրի չարաշահման դէպքերը, պիտի վերլուծէ քուէարկութեան թուային պատկերը, այլ հասարակական կազմակերպութիւններու հետ պիտի դիտարկէ քուէարկութեան ընթացքը տեղամասերուն մէջ:

Կեդրոնի ծրագրերու ղեկավար Վարուժան Յոկտանեանի խօսքով, սահմանադրական հանրաքուէն ի վեր դիտորդներու թիւը եռապատկած են, եւ այժմ տեղամասերու մօտ երկու երրորդին, աւելի քան 1500 տեղամասերու մէջ դիտորդներ կ'ունենան, ըստ որուն, նաեւ սփիւռքահայ դիտորդներ:

Իրագեկ քաղաքացիներու միաւորման ղեկավար Դանիէլ Խոանիսեանի փոխանցմամբ, իրենք վերջերս դիտարկած են նոր համակարգի փորձարկումը Սեմյոնովկայի մէջ, եւ արդիւնքը մտահոգիչ էր: «Մեր դիտորդները նկատեցին, որ նոյն անձը կարողացաւ երկու անգամ էլեկտրոնային գրանցման սարքով գրանցուել, որ էլեկտրոնային գրանցման սարքերը ընթացեցին անձնագրի պատճէն, այն ընդունելով անձնագրի տեղ, եւայլն»:

Դիտորդները մեծ յոյսեր չեն կապած նաեւ տեսախցիկներու հետ, որոնք կը տեղադրուին տեղամասերու մեծ մասին մէջ:

Մշտադիտարկումներէն եւ ընտրատեղամասերուն մէջ քուէարկութեան հետեւէն բացի, քաղաքացիական հասարակութիւնը այս ընտրութիւններուն ընդառաջ կը փորձէ նաեւ վերհանել բովանդակային հատուածը պայտիքն, ինչ դիրքորոշում ունին ընտրութիւններու գացող կուսակցութիւնները Հայաստանի համար շատ կարեւոր եւ հրատապ հարցերու վերաբերեալ:

Տարատեսակ դաշինքներու եւ առճակատումներու, նախընտրական շրջանի ընդհանրացման եզրին, հանրութեան յուզող գլխաւոր հարցերու պատասխանները չկան, քաղաքացիական հասարակութիւնը

պաշտպան հանդիսացող նախագահ Թրամփի՝ կը նմանի այն ամերիկեան գործակալներուն, որոնք Լատին Ամերիկայի մէջ ատենօք գիւղացիներու ըմպելի ջրերը կը թունաւորէին եւ յետոյ բուժարաններ կը հաստատէին այդ գիւղերուն մէջ, որպէսզի գիւղացիներուն կողմէ սիրուէին:

Շատեր պիտի հարց տան այս-



Հարցաշար պիտի կազմէ եւ ուղարկէ կուսակցութիւններուն, ակնկալելով յստակ պատասխաններ:

Հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեան ըսաւ. «Եւ ուզում ենք բացայայտել նրանց: Ես չեմ ուզում խօսել, թէ ընտրութիւնները դրա հետեւանքով ազատ, արդար կ'անցնեն»:

Հելսինկեան քաղաքացիական խմբակցութեան վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցի խօսքով, այս ընտրութիւններուն գաղափարներու մրցակցութիւն չկայ. մինչ Հայաստանի առջեւ օր-օրի աւելի լուրջ արտաքին եւ ներքին մարտահրաւէրներ կը ծառանան, ընտրութիւններուն ընդառաջ քննարկուող հիմնական հարցն է, թէ ով որուն հետ կը միանայ:

Իրաւապաշտպան Զարուհի Յովհաննիսեան ըսած է, «Քաղաքական ամենասուր հարցերից մէկը, արդեօ՞ք կան Հայաստանում քաղբան-տարկեալներ: Արդեօ՞ք պատ-կերացնում էք Ղարաբաղեան հարցի լուծումը փոխզիջման տարբերակով: Արդեօ՞ք կ'ուզէք, որպէսզի ընդունուի ընտանեկան բռնութեան մասին օրէնսդրութիւնը: Այո-ոչ-էր, որոնք ամբողջովին բացայայտում են պատկերային դաշտը, լիւստորացիայի նման մի բան են նախատեսում, որը մեզ համար էլ վերլուծութեան բաւական լուրջ նիւթ կը լինի»:

տեղ, թէ ինչ կապ ունի հայոց բանակի նիւթը Թրամփի հետ:

Որովհետեւ նման իր նմանը կը գտնէ, եւ զօրաւոր Թրամփի բնական դաշնակիցն ըլլալով Թուրքիան՝ հայոց բանակը միշտ արթուն ու պատրաստ ըլլալու վիճակին պիտի ենթարկուի, որպէսզի Արցախը Հայաստանին վստահելու իրաւունքն չզրկուի:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժողո՞ւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՄԻՕՐԵԱՅ ԲԱՑԱՌԻԿ ՍԵՄԻՆԱՐ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴԵՐՈՍԱԿԱՆ ՀԱՃՈՆԻՆ



Անմիջապէս պէտք է աւելցնել, որ Գրիգոր Սաթամեանի նման թէ՛ դերասանական եւ թէ՛ բեմադրական գաղտնիքները լաւագոյնս օգտագործել գիտցող, գանոնք համբերատար, յարատեւ, սահուն մեքանիզմով եւ տինամիք կիրառումով կեանքի կոչող արուեստագէտ բեմադրիչին՝ ամիսներու վրայ երկարող բեմական քրտնաթոր աշխատանքը ասկէ ուրիշ արդիւնք չէր կրնար տալ: Արդիւնք մը, որ «Թենոր մը կ'ուզուի»ի փայլուն

Շար.ը էջ 18



Կը ներկայացնէ՝

ԹԵՆՈՐ ՄՐ ԿՈՂՈՒԽ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՒ ԱՐԱՐՈՎ

Lend Me a Tenor

A COMEDY IN 2 ACTS

Հեղինակ՝ Written by
ՔԷՆ ԼՈՒՏՎԻԿ KEN LUDWIG

Բեմադրիչ՝ Directed by
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ KRIKOR SATAMIAN

ժողովուրդի փափաքին ընդառաջելով
կատակերգութիւնը պիտի կրկնուի
հետեւեալ թուականներուն.

ՓԵՏՐՈՒՄ / FEBRUARY
11-12 / 18-19, 2017

Հ.Բ.Ը.Մ. վաչէ եւ Թամար Սամուկեան Կեդրոն
A.G.B.U. Vatche & Tamar Manoukian Center
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

Շաբաթ օրերը ժամը 8:00-ից
Կիրակի օրերը ժամը 6:00-ից

Sոմսերը կարելի է ապահովել / Tickets available at:
Հ.Բ.Ը.Մ. Ի ԳՐԱՍԵՆՍԱԿԸ / A.G.B.U. OFFICE (626) 794-7942
ՊԵՐԵ ԳՐԱՏՈՒՆ / BERJ BOOKSTORE (818) 244-3830
ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆ / ABRIL BOOKSTORE (818) 243-4112
ITSMYSEAT.COM/TENOR
Մուտքի նուէր / Donation \$25

By popular demand
4 more performances
have been added of
Lend Me a Tenor

ԱՐԲԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ՊԱՏՄԱՇՐՋԱՆԸ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ (991-1258 Թ.Թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՈՎ ԱՐԲԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՆԵՐ Հեղինակ՝ ՊԵՏՐՈՍ Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ԽԱԶԻԿ ԵՆԱՆՅԵԱՆ

Մեծագոյն ուրախութեամբ ստացայ եւ հաճոյքով կարդացի վերոնշեալ հատորը, որ իր եզակի բովանդակութեամբ, նիւթերու խիստ արհեստավարժ դասաւորումով՝ տպաւորիչ գործ մըն է:

Որպէս իրաք ծնած հայ մը, բնաւ չէի լսած կամ կարդացած, թէ Աբբասեան խալիֆայութեան մէջ ծագումով հայ խալիֆա ունեցած ենք, նոյնիսկ իրենց մօր կողմէ հայեր ըլլալով: Այս հատորով նման տեղեկութիւններ ունենալով իրապէս հպարտ զգացի:

Հատորը հրատարակուած է Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի կողմէ: Լուսահոգի Տ. Մեսրոպ Արք. Աշտնիկի անունը կրող հիմնադրամի մեկենասութեամբ, որպէս 146-րդ հրատարակութիւնը:


Հեղինակը՝ Պետրոս Մովսէս Թովմասեան ծնած է Պասրա, իրաք 1954-ին: Աւարտած է Պաղտատի Ազգային Կրթական վարժարանը, ապա աւարտած է Պաղտատի համալսարանի ճարտարապետական գոյնճը, արժանանալով ճարտարապետի վկայականի:

Հմուտ, բանիմաց ճարտարապետ մը ըլլալով հանդերձ, Պետրոս Թովմասեան յատուկ սէր եւ հետաքրքրութիւն ունի հայոց պատմութեան նկատմամբ: Ան հայոց պատմութեան խորաթափանց ուսումնասիրութիւններ, յօդուածաշարքեր ունի եւ փոքր տարիքէն դասախօսութիւններու շարքով ելոյթներ կ'ունենար: Այսպէս, դասախօսած է իրաք, Յորդանան, Ա.Մ.Ն. Անգլիա, Հոլանտա եւ այլ երկիրներ ու քաղաքներ:

Պետրոս Թովմասեանի այս հատորը կը հանդիսանայ իր երրորդ հատորը: Ասկէ առաջ ան երկու պատմական գիրքեր հրատարակած է: «Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը» լոյս տեսած է 2006-ին: Երկրորդը՝ «Արարատ-Ուրարտու Աստուածաշունչի ընդմէջէն», լոյս տեսաւ 2012-ին եւ այս վերջին հատորը, որ լոյս տեսաւ 2016-ին երեք հատորներն ալ տպուած են Երեւանի «Զանգակ» տպարան-հրատարակչատան մէջ:

Պետրոսեան եւ իր ազնուափայլ տիկինը՝ Դոկտ. Հրաչուհի Թովմասեան, երկուքն ալ ճարտարապետներ են: Երկուքն ալ շատ լաւ եւ պատուաբեր գործ ունէին Լոս Անճելոսի մէջ: Այնուհանդերձ, անոնք կանուխ հանգստեան կոչուեցան Ա.Մ.Ն.ի մէջ, Հայաստան տեղափոխուեցան եւ քանի մը տարիէ ի վեր Երեւան կ'ապրին:

Աբբասեան Արաք խալիֆայութիւնը, որուն մայրաքաղաքը Պաղտատն էր, իշխեց 500 տարի (750-1258): Այս խալիֆայութիւնը արաբական աշխարհի ամենէն փայլուն էջերը կերտեց: Զինուորական, մշակութային, ճարտարապետական, տնտեսական, պետական անմասն շրջան մը ապրեցան արաբները, այս խալիֆայութեան օրերուն, որուն սահմանները անծայրածիր էին, կը հասնէին Պաղտատէն Սպանիա, Ափրիկէի հիւսիսային շրջանը, ողջ Թուրքիան, Սէուտի Արաբ-



իան եւ Պարսկաստանի մէկ մասը, Կովկասը եւ այլն:

1258-ին, Մոնկոլներ կոչուած հրէշներու արշաւանքներով հիմնադատակ եղաւ Աբբասեան խալիֆայութիւնը: Արմատախիլ եղան այս պետութեան մշակոյթի կոթողները, այրուեցան անոնց գիրքերը, կողոպուեցան ժողովուրդին ունեցուածքները, քարուքանդ եղան անոնց աղօթքի մզկիթները, հազարումէկ գիշերներու քաղաքը՝ Պաղտատը աւերակներու վերածուեցաւ:

Այս հատորով Պետրոս Թովմասեան տուած է այս խալիֆայութեան միայն երեք հարիւր տարուայ պատմութիւնը (991-1258): Այս ժամանակներուն էր որ ծագումով հայ խալիֆաներ ունեցած են:

Աբբասեան խալիֆայութիւնը իր 500 տարուայ պատմութեան մէջ ունեցած է 37 խալիֆաներ, որոնցմէ շատերուն մայրերը արաբներ չէին, այլ՝ պարսիկ, յոյն, թուրք, հայկէջ, վրացի, ռուս եւ անշուշտ հայ:

Ծագումով հայ խալիֆաները իշխած են 142 տարի. անոնք թիւով 5 խալիֆաներ էին, որոնց մայրը կամ մեծ մայրը հայ էին:

Այս խալիֆաները Աբբասեան խալիֆայութեան ամենէն փայլուն եւ սիրուած խալիֆաներն էին: Շատ ծանօթ էին, որպէս ծագումով հայ խալիֆաներ:

Օրինակ, «Ալ Կամ» խալիֆան, որ իշխեց 1031-1075 թ.: Անոր մայրը հայ էր, անունը՝ Կաթր Ալ Նատա, որ հայերէնով կը թարգմանուի Շողակաթ, որ Ս. էջմիածնի (Վաղարշապատ) քաղաքի մէջ կառուցուած եկեղեցի է, ըստ աւանդութեան հոն ուր Հռիփսիմեան նահատակներուն վրայ «շող կաթած» է, (մէջբերումը Պետրոս Թովմասեանէն):

Կաթր Ալ Նատան կը հանդիսանայ բացառիկ ձիրքերով եւ ուշիմութեամբ հայուհի մը: Զայն կարելի է դասել հայոց պատմութեան կարեւոր հայուհիներու շարքին: «Ալ Կամ» խալիֆայութեան օրերուն, Աբբասեան հարստութիւնը շատ ջերմ եւ սիրալիր յարաբերութիւններ ունէր հայոց հետ, շնորհիւ Կաթր Ալ Նատայի ներկայութեան:

«Ալ Կամի» որդին էր Ալ-Մուկթադին, որ իշխեց 1075-1094 թ.թ. եւ այս վերջինի որդին էր Ալ-Մուսթաֆազըր խալիֆան, որ իշխեց 1094-1118 թ.թ.: Ուրեմն, այս երեք խալիֆաները, որոնք Կաթր Ալ

Նատայի զաւակը, թոռն ու ծոռն են, որոնք ծագումով հայ արմատներ եւ հայու արիւն ունին: Այս երեքը իշխեցին 87 տարի: Անկէ ետք ուրիշ շրջան մը եւս 55 տարի հայկական ծագումով խալիֆաներ եղան՝ Ալ-Մուսթանկիդի հայուհի Ղրղաթ կնոջ զաւակը՝ Ալ-Մուսթաֆազըր (1170-1180) եւ անոր յաջորդող որդին Ալ-Նասըր (1180-1225) խալիֆան էր, որուն մեծ մայրը հայ էր: Ուրեմն ծագումով հայ Կաթրը Ալ-Նատան եւ Ղրղաթին որպէս մայր եւ մեծ մայր, ծնունդ տուած եւ հինգ խալիֆաներու, որոնք իշխած են 142 տարին:

Այս հինգ խալիֆաներու օրերուն, Աբբասեան խալիֆաներ շատ ջերմ եւ սիրալիր յարաբերութիւններ ունեցած են հայերուն հետ: Կիրիկիոյ, Վասպուրականի, Կովկասի եւ այլ շրջաններու հայերը միշտ ալ վայելած են Աբբասեան խալիֆաներուն սէրն ու յարգանքը:

Այս հինգ խալիֆաները, ըստ արաբական աղբիւրներու, բոլորն ալ ծանօթ էին իրենց հայ ծագումով: Նոյն աղբիւրներու համաձայն, այս խալիֆաները ծանօթ են որպէս արդար, մարդասէր, խալիֆայի անունին եւ կողմին արժանի անձնաւորութիւններ:

200 էջնոց այս հատորը բաժնուած է 8 գլուխներու: Հեղինակը իւրաքանչիւր գլուխի սկիզբը գրած է ներկայացուելիք նիւթը, պատմական շրջանը եւ խալիֆաներուն դերն ու յարաբերութիւնները հայութեան եւ հարեան պետութեանց եւ ժողովուրդներու հետ: Նմանապէս, հոն կը գտնենք այս խալիֆաներուն նուաճումները, խաչակիրներուն, սելճուքներուն եւ պարսիկներուն հետ ունեցած պատերազմները եւ նուաճումները: Սպանիոյ հարաւային շրջանին մէջ ծնունդ առած Անտալուսեան մշակոյթը, ճարտարապետական կոթողները եւ այլն:

Հատորը հարուստ է քարտէսներով, յաւելեալ լուսաբանութիւններով, հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով օգտագործուած են մօտ 100-է աւելի աղբիւրներու անունները եւ հեղինակները, մօտ 10 էջ պարունակող անոր անուններու եւ տեղանուններու ցանկը:

Օտար հեղինակներ մեծ գովասանքով տուած են այս խալիֆաներու նկարագրի գիծերը եւ անոնց մասին դրական վկայութիւնները: Օրինակի համար, «Ալ Կամ» խալիֆայի մասին կ'ըսուի, որ ան ծանօթ է որպէս «ժուժկալ,

համբերատար, գիտուն, աստուածասէր, կրօնասէր, հաւատացեալ, օգնող եւ արդար մարդ»:

Իսկ Ալ-Մուկթադրի մասին կը յիշուի, որ ան խալիֆաներու լաւագոյնն է: «Քաջ էր եւ վեհանձն», «ընկերային էր», «մեծ բարեկարգիչ», «գորաւոր անհատականութեամբ խալիֆա մը»:

Ալ Մուսթաֆազըրին մասին կ'ըսուի, որ ան «ժուժկալ, աստուածապաշտ, արդարասէր եւ թէ իր նմանը գթասէր խալիֆա մը չեն տեսած, քիչ կը պատժէր եւ շատ կը ներէր: Ապրեցաւ փառաբանուած եւ մեռաւ ուրախ: Ալ Նասըր խալիֆայի մասին ալ, որ իշխեց 45 տարի, անոր մասին ալ ըսած են, թէ ան «շատ հոգատար էր ժողովուրդին, կը հետաքրքրուէր իր հպատակներուն վիճակով, գիշերները միշտ քայլելով կ'ստուգէր երկիրն եւ ժողովուրդին վիճակը»:

Իսկ հայ մայրերուն մասին, ըստ արաբական աղբիւրներուն, Կաթրը Ալ Նատան «լաւագոյն տիկիններէն էր խալիֆաներու տիկիններուն մէջ»: Նկատուած էր օրհնուած կին մը, իրմով եւ իր օրհնութիւններով պահպանուած է Աբբասեան խալիֆայութեան տունը, բազմաթիւ փորձանքներէ եւ կռիւներէ փրկելով երկիրը»:

Արդարեւ, այս գիրքը մեծագոյն հետաքրքրութեամբ կը կարդացուի: Հոն ուսանելի շատ բան կայ հայ ժողովուրդին ու մանաւանդ աշխարհիկ եւ հոգեւոր դեկավարութեան համար, որուն շատ կարիք ունի մեր ժողովուրդը եւ հայրենիքը:

Հակայ, երկարատեւ եւ իրապէս տքնաջան գիտական աշխատանքի արդիւնք եղող այս գիրքին համար, կուրծքի ամուր սեղմումով կը շնորհակտորեմ մեր սիրելի բարեկամը՝ Պետրոս Թովմասեանը, այս բովանդակալից գործին համար, մաղթելով իրեն կենսաւողջ օրեր եւ վիթխարի գիտական նման նորանոր հրատարակութիւններ:

Այս գիրքը կը փակենք յիշելով մեր անմահ Պարոյր Սեւակին խօսքերը, ուր կ'ըսէ.

«Զիրքերով միայն...»
Փառք ու պատիւ մեր ժողովուրդին, որ իր հազարամեակներու պատմութեան ընթացքին, միշտ ալ մարդկութեան եւ ժողովուրդներուն համար օրհնութիւն եղած է եւ անոնց կեանքին լոյս եղած է, հաւատարմօրէն ծառայելով եւ օգտակար ըլլալով ապրած երկիրներուն եւ ժողովուրդներուն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Email:-----

ՆԵՐՂԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ (Բ.)

ՎԱՐԱՆ ԲԱՅՐՈՒՄ

2016 թ. լրացաւ 1946-1948 թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթի 70 տարին: Այդ կարեւոր իրադարձութիւնը կարծէք թէ անշուք ու լուելեայն անցաւ Հայաստանում, այնինչ այն պէտք է կառավարութեան ուշադրութեան կեդրոնում լինէր՝ նրա մասին բազմաթիւ չլուծուած հարցերի պատասխանները բացայայտելու նպատակով...: Բացառութիւն էր կազմում 1946-49 թթ. հայրենադարձութեանը նուիրուած սցենարիստ-լրագրող Տիգրան Պասկեւիթեանի վաւերագրական եռապատու մի երկրորդ ֆիլմը «Օ, Հայրենիք սառն ու անուշ», որը ցուցադրուեց 2016 թ. Դեկտեմբերի 7-ին Կլենտոնի Հանրային գրադարանում. ես չկարողացայ ներկայ լինել ֆիլմի ցուցադրմանը: Ֆիլմի առաջին մասը «Անծանօթ իմ Հայրենիք» վերնագրով ցուցադրուեց 2012 թ. Յունիսի 29-ին նոյն դահլիճում, որի մասին ես յօդուած գրեցի «Ներգաղթ» վերնագրով. այն սպառնուեց «Մասիս»-ում եւ «Նոր Օր»-ում:

Ընթերցողին եմ ներկայացնում 2015 թ. հրատարակուած «Յուշերիս հետ» գրքից իմ մտորումները «2. Ներգաղթի մասին» վերնագրով:

Մի պահ կանգ առնենք ներգաղթի՝ որպէս երեւոյթի կայացման վրայ: Շատ ներգաղթողների աքսորեցին Սիպիր տարբեր մեղադրանքներով: Ստալինի մահից յետոյ նրանց արդարացրեցին, բայց միայն մի մասը վերադարձաւ, մնացածները թաղուած մնացին լայնատարած Սիպիրի տարբեր մասերում:

Բազմաթիւ գրքեր ու յօդուածներ գրուեցին ու շարունակուեցին են գրուել ներգաղթած հայերի ու Երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միութեան գերի ընկած եւ հայրենիք վերադարձած զինուորների Սիպիր աքսորուելու ու այնտեղ նրանց փորձութեան ենթարկուելու ու շարժարանքների մասին: Գրքեր գրուեցին նաեւ աքսորից վերադարձածների կողմից, որոնք ականատեսներն էին եւ իրենց կաշուի վրայ գրացել էին այդ բոլորը: Գրքերում վեր են հանուել իրականութիւնը՝ ներգաղթի ճիշտ ու սխալ իրողութեան մասին:

Նրանցից թուարկենք մի քանիսը. Մկրտիչ Արմէն, Գուրգէն Մահարի, Պողոս Մնայեան «Երկու Սպանդ» գրքով՝ Հայերի ցեղապանութեան եւ ստալինեան հալածանքներին զոհ գնացած հայ մտաւորականների ու ազգային գործիչների մասին, Յարութ Պարսումեան (անգլերէնով) «Resurrection with Shoe and Cane» իրենց ընտանիքի ողբականի մասին: 2010 թ. լոյս տեսաւ Արմինէ Գունտաքճեանի «Հայրենադարձների բռնաճնշումները ստալինեան ժամանակաշրջանում» գիրքը: Ըստ յօդուածագրի, բաւական լուրջ ուսումնասիրութիւն է, որտեղ օգտագործուած են գրքեր, յուշագրութիւն, վաւերագրական գործեր, մամուլ, արխիւներ, փաստաթղթեր, կան նաեւ վերապրողների կամ նրանց հարազատների հետ հարցազրոյցներ, որոնց մի մասը «CD»-ով կցուած է գրքին:

Ձեռքիս տակ ունեմ Սիպիր աքսորուած եւ արդարացուելուց

յետոյ վերադարձած երկու հայրենադարձների գրքեր, որոնց հեղինակներն այսօր չկան, Աստուած լուսաւորի հոգիները: Նրանք վաղ կերպով նկարագրել են իրենց ապրած դժգոհ օրերը Սիպիրում:

1. Յարութիւն Կալպակեան. «Ո՛ւր էք դուք, Տղաներ»²: Երկխօսութիւն Սիբիրում՝ Լազարէթ հիւանդանոցում բժշկի հետ (էջ 175). «Սեղանի մօտ նստած՝ Անդրանիկին Լազարէթ ընդունող բժիշկը ծանօթանում էր նրա փաստաթղթերին. այնուհետեւ ասաց, որ նստի մահճի վրայ: Յետոյ թղթերից մէկը ձեռքն առաւ ու հարցրեց:

- Դու Լիբանանում ես ծնուել:
- Այո՛, Բէյրութ քաղաքում:
- Ի՞նչ գործ ունես այստեղ:
- Հայրենիք եկայ...:
- Սա քո հայրենիքն է:
- Մենք այդպէս էինք կարծում:
- 67-րդ յօդուածի Առաջին մասը հայկական քրէական օրէնսգրքով ի՞նչ յանցագործութիւն նկատի ունի:
- Հակասովետական արտայայտութիւնների յօդուածն է:
- Եւ դրա համար տասը տարի բանտարկութիւն են տուել քեզ:
- Այո՛: Առաջ աւելի ծանր էր մեղադրանքս: Բայց փաստեր չկային: Ես ոչինչ չեմ արել:
- Հապա ինչո՞ւ քեզ Սիպիր են աքսորել:
- Պէյրութում ես դաշնակցականների դպրոցն եմ աւարտել:
- Դաշնակները ձեզ չասացի՞նք, որ Հայաստան չգնաք:
- Ասացին... Ո՞վ էր լսողը...:

Օրդեսացի բժիշկ՝ Դմիտրի Բորոսովիչ Գովորեվսկին հրեայ էր: Ո՛չ նա, ո՛չ էլ նրա նախնիները չէին եղել Պաղեստինում, որ նոր էր իսրայէլ անունն ստացել ու անկախ երկիր դարձել: Բայց երբ Անդրանիկին հարցրեց:

-Թէ՛լ-Ավիվում, Երուսաղէմում եղե՞լ ես...: Ու վերջինս պատասխանեց: -«Ես չեմ եղել, բայց ընկերներս եղել էին: Նրանք ասացին, որ Թէ՛լ-Ավիւր ժամանակակից գեղեցիկ քաղաք է, իսկ Երուսաղէմը բացօթեայ պատմական թանգարան է»: Նրա աչքերը փայլեցին, կուրծքն ուռչեց ու մէջքին ուղղուեց նստած տեղում... եւ Անդրանիկին ասաց. «Լա՛ւ. գնա՛ առ այժմ հանգստացիր. յետոյ կը տեսնենք...»:

Անդրանիկը հիացել էր հրեայ բժշկի հայրենասիրութեան վրայ. իսկ նա համակրանք էր գրացել անկեղծ ու կիրթ հայ տղայի հանդէպ»:

2. Սուրէն Պուրսալեան. «Ամորձատուած սերունդ»³. «Զգիտեմ ինչքան ժամանակ եմ այսպէս կանգնել-մնացել, զգացի, որ ցրտից սառչում, քարանում եմ: Խարոյկին մօտեցայ, ոտքերս ու ձեռքերս կրակին պարզեցի, ձեռք ու ոտքս սուր ծակծկեցին, ցաւից սկսեցի նուալ:

- Քո մերը..., -հայհոյեցին խարոյկի շուրջ նստած ուսու կալանաւորները, անմիջապէս տեղից վերթուան, հեռացրին կրակից, ոտնամաններս, թաթմաններս փութով հանեցին ու սկսեցին ձեռքս ու ոտքս ձիւնով եռանդուն շփել... Յրտահարուել էի...
- Քո մերը...
- (ոուսի համար մայր հայհոյելը հայհոյանք է. նա այսպէս կարող է դիմել նոյնիսկ իր հարազատ եղբօրը)» (էջ 256):
- Վահրամ Ալազանը «Տառապանքի ուղիներով» գրքում⁴ գրել է



նաեւ ռազմագերիների ու ներգաղթածների Սիբիր աքսորելու մասին. «... Ես անկողինս դռան մօտ դնելով՝ նստեցի վրան: Պառկածներից մէկը հարցրեց.

- Ընկեր ջան, ձեզ ուրտեղէ՞ն բերած են, ի՞նչ գործով են բռնած:
- Ինչ գործով, չգիտեմ, միայն գիտեմ, որ տասը տարի բանտ ու աքսորում լինելուց յետոյ նորից են բռնել:
- Տղաք, կը լսա՞ք, տասը տարի բանտարկել են, ետքը նորէն կը բանտարկուի. աս ի՞նչ աշխարհ ընկանք, չհասկցանք:

... Մեր խցի բնակիչների մեծ մասը ներգաղթողներ էին, իսկ միւսը՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմագերիներ: Կային նաեւ գիւղացիներ եւ այլ մասնագիտութեան տեր մարդիկ: Զարմանալին այն էր, որ ռազմիկները, որոնք գերութիւնից փախել էին Ֆրանսիա, մտել էին պարտիզանական կամաւոր ջոկատները եւ կուռել էին գերմանացիներին դէմ, հայրենիք էին վերադարձել ֆրանսիական կառավարութեան փառքի շքանշաններով՝ դրանց էլ էին բանտարկել, մեղադրելով, թէ ինչու են գերի ընկել: Թէ՛ ներգաղթողները եւ թէ՛ ռազմիկներից շատերը ունէին իրենց ողբերգութիւնը, որոնց մասին կը պատմեմ շատ համառօտակի: Սկսենք ներգաղթողներից:

Անունը չեմ յիշում. սպիտակահեր, դողդոջուն քայլերով մի ծերունի էր ներգաղթել Եգիպտոսից: Գահիրէում ունեցել է մեծ ու շքեղ մի հիւրանոց: Հայրենիքի կարօտը նրան բերել էր Հայաստան: Անընդհատ վաճառում է իր ունեցուածքը, որ այդ գումարով Երեւանում, Զանգուի ափին նորը կառուցի: Սակայն Երեւան հասնելու երրորդ օրը նրան ձերբակալում են եւ գրաւում հիւրանոցի վաճառքից ստացուած վալուտան՝ տանը թողնելով ծերունու ծեր կնոջը առանց ապրուստի: Դժբախտ ծերունուն մեղադրում էին լրտեսութեան մէջ: Նրան քննելու համար Մոսկուայից մի գեներալ էր եկել:

- Հարցաքննութեան ժամանակ գեներալը նրան հարցնում է.
- Ձեր հիւրանոցում անգլիացիներ, ֆրանսիացիներ եւ ամերիկացիներ իջեւանե՞լ են:
- Էլ ի՞նչ հիւրանոց, որ ամին տեսակի մարդիկ չգային: Հիւրանոց նշանակում է ապաստարան, ես հո չէի՞ որոշել, թէ որ ազգից ընդունեմ, որին չընդունեմ, ես իմ փողի տէրն եմ, ուսու կը լինէր թէ ամերիկացի, ինձ համար տարբերութիւն չկար:
- Պարզ է, այդ սպաները ձեզ հաւաքագրել ու ուղարկել են Հա-

յաստան որպէս լրտեսներ, -ասում է գեներալը:

-Լրտես, -գարմացել է ծերունին, լրտեսել իմ հայրենիքի՞ն, մտքովս անգամ չի անցել:

Որքան ծերունին յամառել էր, գեներալը աւելի էր պնդել, ծերունու գործը ձգձգել ու տանջել նրան:

Ամէն Կիրակի ծերունու խեղճ կինը ուտելիք էր բերում՝ կէս բոքոն սեւ հաց, երկու կապ կանաչի եւ մի քանի կտոր խաշած բազուկ: Խեղճ պառաւը որտեղից էր ճարում այդ գումարը, չէինք հասկանում: Մի Կիրակի ծերունին ուտելիք չստացաւ: Խեղճը սկսեց բարձրաձայն արտասուել, մտածելով՝ կամ կինը քաղցից մահացել է, կամ էլ նրան էլ են բանտարկել: Որքան մխիթարում ու հանգստացնում էինք, ոչինչ չէր ստացուում: Նա քիթ ու բերնին ընկած օր ու գիշեր բարձրաձայն լալիս ու մղկտում էր:

Երկար տարան բերին, երկար քաշքշցին ծերունուն եւ վերջն էլ տասը տարի տալով՝ քշեցին Սիբիր: Խեղճ ծերունին այդ քաջբայուած առողջութեամբ ինչպէ՞ս պիտի ապրէր այդ ցրտաշունչ Սիբիրում:

Նշանը յիսունին մօտ էր: Կնոջ հետ ներգաղթել էր Եգիպտոսից: Երեւան հասնելուց մէկ շաբաթ յետոյ նրա կին Հեղինեն սկսում է դժգոհել մեր նիստ ու կացից եւ ամուսնուն ստիպում է, որ նորից վերադառնան արտասահման: Նշանը կնոջ հետ չի համաձայնում: Մի անգամ Հեղինէն ինչ-որ գործով գնում է Ներգաղթի կոմիտէ: Այստեղ նրան է մօտենում մի կին ու սկսում է սրտացաւ կերպով հարցուփորձ անել նրանց կեանքից: Նկատելով, որ Հեղինէն դժգոհ է իր վիճակից, նրան խորհուրդ է տալիս փախչել արտասահման եւ նրան առաջարկում է իր ծառայութիւնը՝ ասելով, որ իր ամուսինը սահմանապահ գործերի սպայ է, կը կարողանայ յաջողացնել նրանց փախուստը Պարսկաստան:

Երբ Հեղինէն հարցնում է, թէ այդ ծառայութեան համար որքան է ուզում, կինը պատասխանում է՝ 10.000 ռուբլի: Հեղինէն պայմանաւորում է, որ երեք օր յետոյ նոյն տեղում, նոյն ժամին իրեն կը յանձնի այդ 10.000 ռուբլին:

Տուն վերադառնալով՝ Հեղինէն ամուսնուն պատմում է իր «յայտնագործութեան» մասին եւ նրան առաջարկում եղած-չեղածը ծախել եւ փախուստի համար գումար նախապատրաստել: Ծայր է առնում ընտանեկան վէճն ու պառակտումը, ի վերջոյ կինը յաղ-

ՍԱԲՈՒԿԻ ՍՆՆԴԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լեցուն կենսանիւթերով եւ հանքանիւթերով, Սմբուկը կենսական եւ ուժ պարունակող պտուղի տեսակ մըն է:

Սմբուկը իր բաղադրութեամբ՝ մարմնի առողջութեան կը սատարէ, մինչեւ իսկ կ'անխարզիլէ քաղցքեղը եւ կը նոսրացնէ մարմնի իւրը (քոլէսթէրոլը):

Սմբուկը կը պարունակէ նաեւ "chlorogenic" կոչուած թթուածինը - բուսական բաղադրութիւն ունեցող, հակա-օքսիտացնող եւ մարմնի վատ իւղերը նուազացնող իր յատկանշական ազդեցութեամբ: Այս թթուածինը նաեւ մարմնի բջիջները հիւանդութիւններու դէմ պատրաստող եւ պայքարեցնող

յատկանիշներ ունի:

Սմբուկի կեղեւներուն մէջ կը գտնուի Nasunin (Նասունին) կոչուած հակա-օքսիտը որ կ'անխարզիլէ հիւանդութիւններու եւ քաղցքեղի յառաջխաղացքը:

Սմբուկը կը պարունակէ սքանչելի նեարդ - (Ֆայլըր), որ կը պահպանէ մարմինը երկրորդ տեսակի շաքարախտէն եւ կը հանգստացնէ մարտողական դրութիւնը: Անոր մէջ կը գտնենք նաեւ կենսանիւթեր եւ հանքանիւթեր - վիթամին A, B, C, Ֆոլէյթ, փողասիտ, մակնիզիում, գալսիտ, եւ ֆոսֆորիւս: Սմբուկը կը նախընտրէ «ալլէրթիք» հակազդեցութիւն յառաջացնել ու մասնաձուլում: Հարկ է զգուշ ըլլալ:

ԻՆՉ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԽԱՂՈՂԸ

1. Խաղողի հատիկները կը պարունակեն շատ շաքար եւ քրքմեղ (Galium): Խաղողն ու անկէ պատրաստուած հիւթը կը բարելաւեն մարմնի ջուր-աղաչին փոխանակութիւնը, որուն իբրեւ արդիւնք մարմինը կը մաքրուի միզաթթուէն:

2. Խաղողը օժտուած է միզամուղ յատկութեամբ: Բացի այդ, լալթուլցնող ու քրտնամուղ ազդեցութիւն կ'ունենայ մարմնին վրայ: Լալ միջոց է երիկամներու եւ միզաքարային հիւանդութիւններու, ինչպէս նաեւ փորկապութիւններու պարագային: 3. Կ'օգնէ կարգաւորելու զարկերակային ճնշումը: 4. Կը նպաստէ քրտնաթորութեան մակարդակի նուազեցման ու սրտամկանի ուժգնութեան բարձրացման:

5. Խորհուրդ կը տրուի սակարկելու թեան պարագային, ջղախին ու ֆիզիքական հիւծման, յատկապէս կենսանիւթատապի կամ

ալ ապաքինման ժամանակ, քանի որ կը պարունակէ շաքար մը կենսանիւթեր ու հանքային նիւթեր:

6. Շատ օգտակար է պրոնչիթով, ասթմայով ու թոքախտով հիւանդներուն, կ'օգնէ շնչուղիներէն լորձի հեռացման:

7. Մուգ գոյնի պտուղներուն մէջ p-active նիւթերու՝ պիոֆ - լաւոնոլիտներու պարունակութիւնը աւելի շատ է, քան բաց գոյնի տեսակներուն մէջ: Անոնք կը նպաստեն սիրտանոթային համակարգի ամրապնդման: 8. Խաղողը կը պաշտպանէ մաշկը կնճիռներու յառաջացումէն, շրջակայ միջազգայրի վնասակար գործօններու ազդեցութենէն պահպանելով մաշկի թարմութիւնն ու երիտասարդութիւնը: Խաղողէն կը պատրաստեն հիւթ, անուշ, գինի եւ այլն: Իւրաքանչիւր վիճակի մէջ անիկա բարեբար ազդեցութիւն ունի մարմնին վրայ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ՁՍՊԵԼ ՅԱԲԵԼԵԱԼ ՈՒՏԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Աւերող կշիռ քի հիմնական պատճառը յաւելեալ ուտելն է.

Կան քանի մը եղանակներ, որոնք կը նախ օգնէ մարդոց ազատելու այդ վատ սովորութենէն: Ուտելու ընթացքին շատ կիներ կը կորսնցնեն իրենց ինքնատիրապետումը եւ անօթութիւնը յագեցնելու փոխարէն՝ կը սկսին յաւելեալ ուտել, որ անհրաժեշտ չէ մարմնին համար:

Ահարժեշտ է «ոչ» ըսել գիտնալ. Համոզեցէք դուք ձեզ այն փաստին, որ ուտելը կեանքի կենսագործունէութեան համար անհրաժեշտ պայման մըն է. այսինքն՝ դուք չէք ուտեր անունդի համար, այլ ապրելու համար: Սորվեցէք ժամանակ առ ժամանակ «ոչ» ըսել ձեր սիրելի ուտելիքին:

Պատրաստեցէք մէկ անգամուան ուտելու չափաբաժինով Պատրաստեցէք այնքան, որ բաւարար ըլլայ մէկ անգամուան ուտելու համար: Եթէ ընտանիք ունիք, ուրեմն կանոնները չեն փոխուիր՝ ըստ անդամներու թիւի: Կարելի է մէկ բաժին աւելի պատրաստել, բայց ոչ թէ ձեզի համար, այլ ամուսինին կամ զաւակներուն:

Օգտագործեցէք փոքր չափի սպասներ.

Ասիկա բաւական ազդեցիկ եղանակ է: Օգտագործեցէք այնպիսի աման-

ներ, կաթաններ կամ աղցանամաններ, որոնք աւելի փոքր չափաբաժին ճաշ կը նպաստեն, որ աւելի քիչ ուտէք:

Մի ուտէք «ընկերակցելու համար».

Պէտք չէ խոհանոց երթալ եւ յաւելեալ ուտել միայն այն պատճառով, որ ձեր ամուսինը այնտեղ կը ճաշէ: Կերէք այն ժամանակ, երբ իսկապէս անօթութեան զգացում ունիք:

Մանրականոն սահմանեցէք. Մանրականոն ոչ միայն պէտք է սահմանել, այլեւ՝ հետեւիլ:

Խորհուրդ չի տրուիր երեկոյեան ժամերուն իւրոտ, հացային անունը եւ քաղցրաւենիք օգտագործել: Հետեւելով ձեր անդակաւորին՝ դուք կը սորվիք ճիշդ ուտել, որուն իբրեւ արդիւնք չէք գիրնար:

Գիշերային ժամերուն մի ուտէք Ասիկա ամենակարեւոր կանոններէն մէկն է, որ կ'օգնէ ազատելու յաւելեալ ուտելու ցանկութենէն: Կարելի է ուտել քանակէն 3-4 ժամ առաջ եւ ոչ շատ ուշ:

Հետեւեցէք նշեալ առաջարկ-խորհուրդներուն, եւ շատ արագորէն կը նախ ազատիլ յաւելեալ ուտելու ցանկութենէն:

ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԵՂՃԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՆԳ ԿԱՐԵՒՐ ԿԵՏԵՐ

Մեզմէ իւրաքանչիւրս ունի յատուկ բառեր, արտայայտութիւններ եւ խօսքեր որոնք սովորաբար կը կրկնէ իր մտքին մէջ:

Առանց անդրադառնալու, բոլորս կ'որդեգրենք բառեր եւ արտայայտութիւններ որոնք կ'ուզենք յաճախ կրկնել մեր մտքին մէջ: Հոգեբանական ուսումնասիրութիւնները ցոյց կու տան թէ մեր մտքին մէջ յաճախ կրկնուող արտայայտութիւնները մեծ ազդեցութիւն կընեն ունենալ մեր վրայ: Այս արտայայտութիւնները կընան հիմը դառնալ մեր մտածելակերպին, տրամադրութեան, զգացումներուն:

Ըստ հոգեբաններու, կարգ մը մարդոց պարագային միտքին մէջ գոյութիւն ունեցող կրկնողական միտքերը նաեւ կընան արտասանուիլ սովորաբար երբ մարդիկ առանձին ըլլան: Այս self-talk-երու կամ առանձին խօսելու սովորութիւնը արդիւնք է տառապանքի կամ նեղութեան: Նման խօսակցութիւններու պարունակութիւնները յաճախ ժխտական կ'ըլլան:

Ժխտական միտքերը կը յառաջացնեն ժխտական խօսքեր, որոնք իրենց կարգին պատճառ կը դառնան ժխտական վարմունքի եւ ժխտական կեանքի ընթացքի: Մասնազէտներ կը շեշտեն թէ նման ընթացք մը փոխելու համար, մարդիկ նախ պէտք է փոփոխութիւններ կատարեն իրենց միտքերուն մէջ՝ յատկապէս կրկնողական արտայայտութիւններուն դէմ:

Ինչպէ՞ս կարելի է ժխտական ուժերը վերածել դրականի: Ինչպէ՞ս կարելի է դրականութիւն ստեղծել մեր կեանքին մէջ: Հետեւեալ հինգ գործօնները կ'օգնեն, որ մարդիկ դրականութիւն ստեղծեն իրենց մտածելակերպին եւ կեանքին մէջ:

Դրականութեան ամէնէն կարե-

ւոր սիւներէն է երախտապարտութիւնը: Դրական հոգեբանութեան (positive psychology) մասնագէտները կը թելադրեն ամէն օր գրաւոր արտայայտութեամբ լիչել երեք բան որոնց համար երախտապարտ կը զգանք:

Հոգեբաններ կը թելադրեն որ մարդիկ անդադար հետեւին իրենց մտածումներուն եւ յայտնաբերեն թէ ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու տակ անոնք հակամէտ են ժխտական ձեւով մտածելու, գնահատելու կամ ուրիշները դատելու: Իւրաքանչիւր ժխտական միտք կարելի է չէզոքացնել դրական միտքով մը:

Հետեւաբար, երկու դրական միտքեր ընդդէմ մէկ ժխտական միտքի կընան դրականութիւն ստեղծել ուղեղին մէջ:

Բոլորս լաւ գիտենք թէ մարմինն ու միտքը որքան կապուած են իրարու եւ թէ որքան մէկուն առողջութիւնը առնչուած է միւսին հետ: Այս տեսութեան վրայ հիմնուելով, հոգեբաններ խորհուրդ կու տան առողջ եւ ուրախ պահել մարմինը:

Թէեւ «դիմակ»ներու օգտագործումը ունի ժխտական հասկացողութիւն, սակայն ժպտուն դիմակներով դէմքը ծածկելը կընայ բաւական դրական ներդրում ունենալ հոգեկան առողջութեան վրայ: Ժպիտը ունի աներեւակայելի ուժ մը: Նոյնիսկ օտարները ժպիտով դիմաւորելը կընայ գոհացուցիչ դրականութեամբ:

Նշանաւոր առածի մը համաձայն՝ գրպանին մէջ երկու խեչափառ եթէ դնես երկուքը կը մնան այստեղ, սակայն եթէ մէկը հանես միւրը ձգես, երկուքը դուրս կ'ելլեն գրպանէն: Այլ խօսքով, դրականութիւն ստեղծելու եւ զայն պահպանելու համար կարեւոր է որ անձը ինքզինք շրջապատէ դրական մարդոց հետ:

ՄԱՐԴՈՑ ՄԻՋԵՒ ԿՍԱՅՐՈՒԹԵԱՆ ՀԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՈՒԱԶԻ

Աշխարհի մէջ տիրող քաղաքական իրավիճակը, անտեսական դժուարութիւնները նոյնիսկ ամէնէն զարգացած երկիրներու մէջ, սպանութեան դէպքերու յաճախականութիւնը, լրատուամիջոցներու դերը՝ լուրերու տարածումին մէջ, ինչպէս նաեւ՝ բազմաթիւ ընկերային եւ քաղաքական գործօններ պատճառ դարձած են, որ տարիներու ընթացքին մարդոց միջեւ նուազի վստահութիւնը:

Վերջերս կատարուած ուսումնասիրութիւն մը Միացեալ Նահանգներու բնակիչներուն մասնակցութեամբ, ցոյց տուած է թէ ամերիկացիներու միայն մէկ երրորդն է, որ կը հաւատայ թէ մարդոց մեծամասնութիւնը վստահելի է: Իսկ անոնց մեծ մասը կը հաւատայ թէ կարելի չէ բոլորովին վստահիլ մարդոց: Ուսումնասիրութիւնը նաեւ պարզած է թէ ամերիկացիներու մեծ մասը չի վստահիր օտարներուն:

Այս ուսումնասիրութիւններու արդիւնքներէն կարելի է եզրակացնել թէ մարդոց մօտ հետզհետէ կը

նուազի ընկերութեան պատկանելիութեան զգացումը: Նախապէս կատարուած ուսումնասիրութիւններ պարզած են թէ մարդոց մշակած ընկերութիւններու միջին թիւը սկսած է նուազիլ 1990-ական թուականներէն ի վեր: Ուսումնասիրութիւնը նաեւ յայտնաբերած է թէ այս երեւոյթի հիմնական գործօններէն է վստահութեան հարցը:

Վստահութիւնը, նոյնիսկ օտարներու հանդէպ, մեծ դեր ունի ընկերութիւններու կազմութեան եւ գոյատեւման մէջ: Երբ մարդիկ կորսնցնեն իրենց վստահութիւնը, կը կորսուի նաեւ իրենց պատկանելիութեան զգացումը: Դժուար է արդիւնաւէտ եւ դիւրին լուծում գտնել վստահութեան հարցին, որովհետեւ ինչպէս վերը նշեցինք, բազմաթիւ գործօններ միասնաբար կընեն վստահութեան:

Սակայն, ընդհանուր առմամբ կարելի է ըսել, որ ներդրում տուելու եւ դրական զգացումները կընան վերացնել մարդոց միջեւ անվստահութեան նշանները:



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

Ձեր Ծանուցումները Կստահեցէք «Մասիս» Շաբաթերօթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԻՕՐԵԱՅ ԲԱՑԱՌԻԿ ՍԵՄԻՆԱՐ

Շարունակուած էջ 7-էն

ազատած իր հօր Շիւքրի Գօփուշեանի ողբականի, իսկ Լուիս նմանապէս իր հօրենական մեծ մօր՝ Ակիլիինէ Թաթուլեանի Հաճնոյ հերոսամարտի օրերուն կեանքի դժուարութիւններուն եւ կրած մարտահրաշքներուն մասին: Անոնք միասնաբար երգեցին հաճնոցինը ու քայլերգը «Օղանաւ եկաւ» նաեւ դրուագներ պատմեցին Հաճնոյ բարբառով:

«Անի» Հայկական Ազգայն Հիմնարկի տնօրէն Դոկտ. Ռուբէն Ատալեան, ուշագրաւ ելոյթ մը ունեցաւ Հաճնոյ կրթա-դաստիարակչական գործընթացին, մանկավարժական հաստատութիւններուն եւ անոնց ձգտած հարուստ ժառանգութեան, տեղուց բնակչութեան ու ցեղապանութենէն վերապրած սերունդին վրայ:

Դոկտ. Ժօրժ Գուշեան անդրադարձաւ իր հօր գրած կենսագրութեան ու յատկապէս օրագրութեան վրայ: Արդարեւ իր հայրը՝ Եղեռնի արհաւիրքներուն ակնատես դառնալէ ետք ձեռքաւարտուած էր 1915ին Սուրիոյ մէջ Օսմանեան կառավարութեան կողմէ, ապա մազապուրծ ազատուելով իր վերջնական հանգրուանը գտած էր Միացեալ Նահանգներու մէջ: Արդարեւ, օրը օրին գրուած ուշագրաւ օրագրութիւն մըն էր:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Դոկտ. Քէյ Մուրատեանի «Մօրս Զայնը» (My Mother's Voice) ֆիլմը, որ պատ-

րաստուած էր նոյն անունը կրող վէպի հիման վրայ:

Սոյն ֆիլմը կսկծալի պատմութիւնն է 14 ամեայ հաճնոցի Ֆլօրա Մանուշեանի: Արդարեւ, Ֆլօրայի ձայնը՝ համահունչ է այն բոլոր վերապրողներու ձայնին, որոնք ապրած են Հայոց Ցեղասպանութեան արհաւիրքը: Կ'արժէ այստեղ նշել որ «Մօրս Զայնը» ֆիլմն արժանացած է Թորոնթոյի մէջ կայացած Շարժապատկերի փառատօնի պատուոյ մրցանակին որպէս լաւագոյն վաւերագրական ֆիլմ: Ան ցուցադրուած էր նաեւ Լոս Անճելոսի մէջ ARPA Film Festival-ին:

Ցերեկոյթն աւարտեցաւ յատկանշական համերգով մը, մասնակցութեամբ ԱՄՆ-ի տաղանդաշատ արուեստագէտներ Դոկտ. Վաչէ Մանկրեանի (երաժշտութեան մեկնաբանութիւն եւ դաշնամուր) եւ Դոկտ. Կարինէ Աւագեան (երգ): Գեղարուեստական բարձր կատարումով եւ ինքնուրոյն մեկնաբանութեամբ ներկաներն ունկնդրեցին Կիլիկիոյ շրջանի յատուկ երգերէն «Կիլիկիա» եւ «Ատանայի Ողբը», ինչպէս նաեւ «Օղանաւ եկաւ», «Հաճնոցի քաջ պատանի», Կոմիտասի «Զայն տուր ով ծովակ» եւ Ալեքսի Հեքիմեանի «Հայաստան» երգերը:

Կը շնորհակտընք Լորանս եւ Տօրօթի Աւագեաններու յիշատակին ձօնուած սոյն միօրեայ հաւաքը նախաձեռնողները, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

ՀԲԸՍ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ

Շարունակուած էջ 14-էն

յաջողութեան փաստով գինք կ'արժանացնէ կրկնակի շնորհակտընքի:

Բիէսին թեքնիք անձնակազմը, — յանձինս Վիգէն Պալապանեանի (բեմավար), Մանուկ Սաթամեանի (բեմազարդումի յղացում եւ շինութիւն), Ռաֆֆի Սաթամեանի (օգնական), Ռաֆֆի Գալամբարեանի (երաժշտութիւն եւ լոյս), Ռիթա Քէշիշեանի (վարսալարդարում), Լիւսի Պալապանի (բեմի առարկաներ) եւ օգնականներ՝ Ալին Պարոնեանի, Ռիթա Թալար Պետրոսեանի, Սերժ Նաւեանի (երաժշտական ձայնագրութիւն) եւ Վիգէն Պալապանեանի (գրքոյկի շապկիկ եւ դերասաններու նկարները), — նոյնքան արժանի են շնոր-

հակտանքի:

Գրքոյկին մէջ, Հ.Բ.Ը.Մ. Սաթամեան թատերախումբի վարչութիւնը մասնաւոր շնորհակտութիւն կը յայտնէր փաստինայի Հ.Բ.Ը.Մ. կեդրոնի պաշտօնեաներ՝ Շաքէ Թումայեանին, Ազնիւ Սապունճեանին, Մանուկ Սաթամեանին եւ Սերժ Նաւեանին:

Աւարտելէ առաջ յայտնեց, որ «Թենոր մը կ'ուզուի» պիտի ներկայացուի Շաբաթ, 18 Փետրուարի երեկոյեան ժամը 8-ին եւ Կիրակի, 19 Փետրուարի երեկոյեան ժամը 6-ին, Փաստինայի Հ.Բ.Ը.Մ. վաչէ եւ Թամար Մանուկեան կեդրոնին մէջ: Լաւ առիթ մը բոլոր անոնց համար, որոնք կ'ուզեն կուշտ ու կուռ ծիծաղաշարժ երեկոյ մը վայելել:

ԱՊԱՔԻՆՍԱՆ ՍԱՂԹԱՆՔ

ՆԱԶԱՐԻԹ ԳԵՒՈՆԵԱՆԻ հիւանդութեան պատճառով Սահակեան Սանուց Միութիւնը արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ իր սիրելի անդամին եւ բարերարին:



Հ.Ս.Ս.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՐԿՈՒ ԽՈՒՄԲԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

Կիրակի, 12 Փետրուար 2017ին Հ.Ս.Ս.Ի ֆութպոլի երկու խումբերը ունեցան երկու ֆութպոլի լիկայի խաղերը, որոնց արդիւնը եղաւ յաղթական:

Հ.Ս.Ս.Ի առաջին խումբը մրցակից ունէր Internazionale-ը: Խաղի տեղի տեղի ունեցաւ Կիրակի, 12 Փետրուար 2017ի կէսօրէ ետք ժամը 1:30ին Sepulveda Basinի մէջ Van Nuys: Հ.Ս.Ս. տարաւ փայլուն յաղթանակ մը 12-3 արդիւնքով:

Հ.Ս.Ս.Ի երկրորդ խումբը մրցակից ունէր United F.C. խումբը: Խաղը տեղի ունեցաւ Կիրակի 12 Փետրուար, 2017ին, երեկոյեան ժամը 9:00ին, Փաստինայի Villa Parkին մէջ: Հ.Ս.Ս. յաղթեց 2-1 արդիւնքով:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ


Յայտնի արձակագիր ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆԻ

Շքեղակազմ նոր հատորը՝ «ԾԱՂԿԱՔԱՂ Պատմութիւններու»

Հրատարակութեամբ՝ Թեքեան Մշակութային Միութեան

Ստանալու համար դիմել՝ «Ապրիլ», «Սարդարապատ» «Պերճ» գրախանութները

Կամ հեղինակին՝ Sarkis Vahagn 8067 Shadyglade Ave. North Hollywood, CA 91605 Tel. 818-504-1946 sarkisvahagn@yahoo.com



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104

Tel: 626-354-5924

vamedia@yahoo.com



www.massisweekly.com
daily news updates

SEROP'S CAFE

GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տխուր առթիվ հետեւեալ նուէրատուութիւնները եղած են «Մասիս» շաբաթաթերթին, որուն համար վարչութիւնը կը յայտնէ իր շնորհակալութիւնները:

- Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան \$100
- Տիկ. Անահիտ Գրքեաշարեան \$100
- Տիար Հրանդ Թումասեան \$100
- Տիկ. Մարի Մելիքեան \$100
- Հ.Մ.Մ.ի վարչութիւն \$100
- Տէր եւ Տիկ. Վարուժան եւ Զարմինէ Սահակեան \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Թագուհի Ունճեան \$50

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան առթիւ Սահակեան Սանուց Միութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գրքեաշարեաններուն:

ՆԵՐՂԱԴԹԻ ՄԱՍԻՆ (Բ.)

Շարունակուած էջ 15-էն

Թում է: Սկստմ են ծախ-ծրխել տան եղած թանկարժեք իրերը, հագուստները, կնոջ զարդերը եւ կարողանում են կուտակել այդ դրամը: Որոշուած օրուայ որոշուած ժամին Հեղինէն գումարը առած գնում է Ներգաղթի կոմիտէ, գումարը յանձնում է երիտասարդ կնոջը, կինը գումարը ստանալուց յետոյ ասում է.

-Վաղը երեկոյեան ժամը ութին դուք ձեր ամուսնու հետ կը գաք կայարան, այնտեղ իմ ամուսինը իր մեքենայով ձեզ կը սպասի: Կը նստէք նրա մեքենան եւ կանցնէք սահմանը: Որպէսզի փախուտը հեշտ լինի՝ շատ իրեր չվերցնէք: Երկու ձեռք թեթեւ անկողինը բաւական է: Իմ ամուսնական կը ճանաչէք հետեւեալ պայմանական նշանով. նա կայարանի դրան մօտ կը կանգնի եւ թերթ կը կարդայ: Երբ նրան կը գտնէք՝ կը մօտենաք եւ կը յայտնէք ձեր ուղի լինելը: Նա անմիջապէս ձեզ մեքենայ կը նստեցնի եւ կ'ուղարկի Պարսկաստան:

Նրանք կայարան մտնելով՝ դրան մօտ կանգնած թերթ կարդացող սպային մօտենալով յայտնում են իրենց ուղի լինելը: Սպան նրանց նստեցնում է մեքենայ եւ բերում... Պետական անվտանգութեան մինիստրութեան ներքին բանտը:

Նշանը միշտ նախատում էր իր չիմար կնոջը եւ անիծում, որ այս ամբամ էլ ենթարկուել է կնոջը: Առաւօտեան, երբ հերթապահ պարետը ներս մտաւ ստուգման, նշանը նրան դիմելով ասաց.

-Քաղաքացի կոմեդիանտ, կը խնդրեմ սա վերմակը տանէք 16-րդ քամերը, տաք Հեղինէ հանրմին եւ ըսէք, որ Նշան աղան կարգադրած է քանդած տեղերը կարել:

-Հեղինէ հանրմը ո՞վ է, հարցրեց պարետը:

-Կինս է: -Ձեր կինը բանտարկուած չէ եւ 16 կամերայում չի ապրում:

-Ձանրմ, ի՞նչ կ'ըսէք, առերեսումի ատեն ինձ ըսաւ, որ հոս է եւ կը նստի 16 քամերը:

Պարետը նրա միամտութեան վրայ ծիծաղելով դուրս գնաց: Վերմակն էլ անկար մնաց:

Մի օր էլ Նշանին առաջարկեցին իրերով դուրս գալ խցիկից: Ո՛ւր տարան, ի՞նչ եղաւ խեղճ Նշանը, չիմացանք:

Վահանը վերին աստիճանի միամիտ եւ թունդ հաւատացեալ մի երիտասարդ էր, համարեա պատանի: Նորահարս իր կնոջ հետ

ներգաղթել էր Սուդանից: Հայրը մեծահարուստ վաճառական է եղել եւ որդու հետ դրել է մեծաքանակ վալիուտա, ոսկեալ ժամացույցներ, թանկարժեք կտորներ, որպէսզի որդին ու հարսը բարեկեցիկ ապրեն:

Երեւան հասնելուց մի քանի օր յետոյ բանտարկում են Վահանին եւ բռնագրաւում են նրա ամբողջ վալիուտան, անգամ կնոջ զարդեղէնը:

Վահանը ամէն օր ծունկ չոքած աղօթում էր կնոջ փրկութեան, ապրուստի համար: Մի օր հակիչը Վահանին աղօթելիս տեսնելով, ասաց.

-Է՛հ, վեր կաց, վեր, էստեղ ժամ չէ, որ աղօթում ես: Էստեղ բանտ է, բանտ, որքան էլ, որ աղօթես, մէկ ք, բան դուրս չի գայ: Խեղճ տղան չոքած տեղից վեր կացաւ ու նստեց անկողնու վրայ, սկսեց բարձրաձայն լաց լինել: Ահա մեր խեղճ Վահանի ողբերգութիւնը: Նոյնմբերի վերջին, բանտի բակում զբօսնելիս սկսեց մեծ-մեծ փաթիլներով ձիւն տեղալ: Վահանը մէկ երկնքին, մէկ իր վրայ ընկնող փաթիլներին նայելով, ասաց.

-Աս ի՞նչ է: -Ձիւն է, ձիւն,-ասացինք մենք ծիծաղելով:

Խեղճ Վահան, կեանքում դեռ ձիւն չտեսած՝ ինչպէ՞ս պիտի ապրէր Միպիրի ձնաքերում: Չմոռանամ նշելու, որ Վահանին նոյնպէս մեղադրում էին լրտեսութեան մէջ, ասելով, թէ նրա հօրը անգլիացիները հաւաքագրել են մեր դէմ, նա էլ որդուն լրտեսութեան է ուղարկել:

-Ձանրմ, ադ լրտես ըսելը, ի՞նչ կը նշանակէ, ատորմէ բան մը չեմ հասկնար. քննիչը ինձի կ'ըսէ, որ ես լրտես եմ եկած:

Այսքանը ներգաղթողների ողբերգութեան մասին, մի քանի տող էլ ռազմագերիների մասին:

Սրանց թւում էր Շամշադի-նից Սուրէն անունով մի երիտասարդ: Բանտարկութիւնից երեք օր առաջ ծնւում է իր անդրանիկ մանչը: Մօրից ամաչելով՝ նա որդու երեսը չէր տեսել: Յաճախ էր մորմոքելով ասում.

-Ախ, գոնէ որդուս երեսը մի ամբամ տեսնէի, նոր բանտարկէին անիրաւները:

Մի այլ երիտասարդի մեղրամիսը չլրացած բանտ էին բերել: Երրորդը նշանուած էր եւ հարսանիքի էր սպասում, սակայն հարսանիքի փոխարէն բանտ էր ճաշակում: Ահա քեզ երիտասարդութիւն, դեռ կեանք չմտած, դեռ կեանքի

բարիքները չճաշակած՝ բանտի, աքսորների դռներին էին դատապարտուած: Բոլորին էլ մեղադրում էին լրտեսութեան մէջ» (էջ 8-9):

Կարպիս Սուրէնէանը «Վիհեր» Գերսամ Ահարոնեանի մահովան 25-րդ տարելիցի առթիւ» յօդուածում՝ նոյնպէս անդրադարձել է ներգաղթի հարցին.

«Այն ժամանակ երկու անգամ՝ Գէորգ Զ. Կաթողիկոսի յուղարկավորութեան, յետոյ էլ, մանաւանդ, Վազգէն Ա. Կաթողիկոսի ընտրութեան ու զահակալութեան առիթով (1954-1955) սփիւռքահայ հիւրերի առաջ բացուեց երկաթէ վարագոյրը ա՛յն կողմից: Այս կողմից փակ էր մնում դուռը (ու դեռ բաւական երկար ժամանակ փակ էր մնալու), եւ ներգաղթից յետոյ գրեթէ մի ամբողջ տասնամեակ աշխարհից կտրուած հայրենադարձներ, նոյնիսկ Լենինականից ու Կիրովականից գալով, ձգտում էին տեսնուել հիւրերի հետ՝ ծանօթներ ի հանդիպելու կամ արտասահմանում մնացած իրենց հարազատներից որեւէ լուր իմանալու յոյսով: Իսկ 1949-ին Սիպիր աքսորուածներն ու «մոռացուածները»... Ի դէպ այսօր, չիսուն տարի յետոյ, ասում է, որ ճիշտ էին հայրենադարձների մասին այն հարազուշակ շշուկներն էլ Ստալինի մահուանը նախորդած ամիսներին: Եթէ չմեռնէր Ստալինը, ուրեմն, վայ թէ այդ հիւրերն այստեղ մի նմուշ անգամ չգտնէին այն հարիւր հազար հայրենադարձներից, որոնք այնպիսի խանդավառութեամբ ներգաղթել էին իրենց հայրենիք՝ Հայաստան...» (էջ 16):

«Աւելի եւս խորն էր սակայն խնդիրը: Այո, հայրենադարձների հանդէպ այդ խտրականութեան վրէժն էլ կար միւս կողմից եւ դա էլ սովետական ռեժիմի հետեւանք էր, ոչ միայն «տեղացի» տառապած ժողովրդի վերաբերմունքով (այդ օրերին նշանաւոր դարձած արտաչաչտութիւնը՝ «կարմիր խնձոր ուղարկեցինք, որ եկաք, ինչո՞ւ էք եկել, վա՞տ էիք ապրում էնտեղ»),

այլեւ հենց պետականորեն անվտանգութեան վերաբերմունքով հայրենադարձների հանդէպ (եթէ այդ աչքով էին նայելու, էլ ինչո՞ւ էին արտասահմանից բերել խելակորոյս հայրենասիրութեամբ խանդավառուած հարիւր հազար «անվտանգելիներին»): Սփյուռքահայերին անշուշտ թէ անհասկանալի պիտի թուար այդ խտրականութիւնը («իրենց ասելով»): ...

Այս հոգեբանական բարդ, հակասութիւնների կծիկ դարձած թնջուկը նշանաւորում էր մի գարտուղի, պարագոքաւ երեւոյթ, մի նոր գոյացութիւն հայ իրականութեան մէջ, որի նմանը երեւի չի եղել մեր պատմական անցեալում: Դա 1946-1948 թուականներին ներգաղթած հայրենադարձների արտառոց կարգավիճակն էր այդ երկու «վիհերի» միջեւ: Հայրութեան մի ստուար խավ՝ հարիւր հազարանոց, որն սփիւռքից բերուեց հայրենիք, արդէն իսկ բզիկ-բզիկ մասնատուած հայ ժողովրդի ընդհանուր բարդ հոգեբանական դաշտում դարձաւ հենց այն գարտուղի երեւոյթը, այն նոր գոյակցութիւնը, որ իբրեւ օտարոտի ընկալուեց Հայրենիքում «տեղացիների» կողմից, իսկ միւս կողմից էլ, գուցէ խորքում ստալինեան նենգանպատակ (չմոռանանք Սիպիրը) այդ ներգաղթով սփիւռքից պոկուած ու արգելափակուած, օտարոտիացավ նաեւ «սփիւռքահայերի» համար: Ես գարտուղի էլ անուն ստացայ՝ «ախպար». այդ կէս-կարեկից, կէս-հեզնական, կէս-արհամարհական, երբեմն նոյնիսկ կէս-թշնամական յորջորջանքը, չգիտես ինչպէս ծագած «տեղացիների» լեզուում, կպաւ այդ խաւին ու մնաց որպէս վիրաւորական մակդիր: Այս էր իրականութիւնը՝ ռոմանտիկ մշուշից պատրանաթափ, իրատես բացուած աչքերի համար, սակայն դա բոլորովին չէր նշանակում, որ հայրենիքի սէրը մարեց հայրենադարձների հոգում, ընդհակառակը՝ խոցուեց ու հիւանդագին բորբոքումներ տվեց» (էջ 27):

(Շարունակելի)

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Քետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506**

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ

**ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

BBC-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՔԵՆՐԻԻՍ ՄԻԻԹԱՐԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ՀԱՅԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Հայաստանի ֆուտպոլի ազգային թիմի առաջ եւ անգլիական «Մանչեսթեր Եունայթեդ»-ի ֆուտպոլիստ Հենրիխ Մխիթարեանին է անդրադարձել հեղինակաւոր BBC-ն: «Արմենայրես»-ը ներկայացնում է անգլիական պարբերականի անդրադարձը:

«Մանչեսթեր Եունայթեդ»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը շնորհակալ է Եուրոգեն Կլոպին «Օլդ Տրաֆորդ»-ում ունեցած դժուարին պահերին տուած խորհուրդների համար: «Լիւերպոլ»-ի մարզիչը Մխիթարեանին աջակցել է նաեւ, երբ նա 2013 թուականին տեղափոխուեց Դորտմունդ:

Մօտ 10 շաբաթ չխաղալուց յետոյ Մխիթարեանը յիշել է Կլոպի խորհուրդները, որ ստացել է «Բորուսիա»-ում: «Ես շնորհակալ եմ Կլոպին, քանի որ նա աշխատել է իմ անհատականութեան եւ հոգեբանութեան վրայ», -ասել է Մխիթարեանը: Հայ կիսապաշտպանը երկու մրցաշրջան է անցկացրել Կլոպի գլխավորութեամբ Գերմանիայում, մինչեւ մարզիչ հեռանալն ու «Լիւերպոլ»-ին միանալը: Ութ ամիս անց կիսապաշտպանը հետեւեց իր հին ղեկավարին եւ 26.3 միլիոն ֆունտի դիմաց միացաւ «Եունայթեդ»-ին:

Պրեմիեր լիգա տեղափոխուելը Մխիթարեանի համար մի նոր քայլ էր: Նա խոսում է 6 լեզուով եւ Հայաստանի ամենայայտնի ֆուտպոլիստներից մէկի որդին է: Մխիթարեանի հայրը՝ Համլետը, ով եւս միջազգային կարգի ֆուտպոլիստ էր, մէկն էր առաջիններից, որ կարողացաւ հանդէս գալ արտասահմանում Խորհրդային Միութեան տարիներին: Համլետը մահացաւ, երբ Մխիթարեանը 7 տարեկան էր: «Նա իմ եռանդն է, իմ նպատակը եւ իմ երազանքը: Երբ նա մահացաւ, ես չէի գգում կորստի իրական ազդեցութիւնը, սակայն ես գիտէի, որ նա նայում է ինձ երկնքից: Նա կը հպարտանար ինձմով»:

Մխիթարեանն այժմ աշխարհի ամենայայտնի հայերից մէկն է: Նա մի երկրից է, որը 5 տարի շարունակ պատերազմի մէջ է եղել Ատրպէյջանի հետ, նորմալ փոխյարաբերութիւններ չունի Թուրքիայի հետ՝ կապուած Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանեան կայսրութեան իրականացրածի հետ:

«Շատ դժուար էր ապրել այդ դժուարին ժամանակներում, երբ այդքան շատ խնդիրներ կային հարեւանների հետ, եւ պատերազմ էր գնում», - Մխիթարեանի խօսքից մէջբերումով համեմել է իր յօդուածը BBC-ն:

ՄՈՒՐԻՆԻՕ. ՎՍԱՅ ԵՄ, ՈՐ ԻԲՐԱՀԻՄՈՎԻՉԸ ԿԸ ՄՆԱՅ

«Մանչեսթեր Եունայթեդ» ու շուէտ յարձակուող Ջլատան Իբրահիմովիչը մօտ են համագործակցութիւնը եւս մէկ մրցաշրջանով երկարաձգելուն:



«Ես բացարձակ համոզուած եմ, որ Իբրահիմովիչը մտադիր է մնալ «Մանչեսթեր Եունայթեդում» նաեւ յաջորդ մրցաշրջանում: Նա տեղափոխուած էր այստեղ առնուազն երկու տարով խաղալու մտադրութեամբ: Առաջին տարին աստիճանաբար մօտենում է աւարտին: Հաւանաբար, նա չի կարող այն համարել լաւագոյնը իր կարիերայում, քանի որ Իբրահիմովիչը շատ յաւակնոտ տղայ է: Կարծում եմ՝ նա աւելին է ակնկալում ինքն իրենից»:

Ամրանը շատ ակտիւ չէնք լինի տրանսֆերային շուկայում: Մի քանի խաղացողներ կը հեռանան, 2-4 նորեկներ կ'ունենանք հաւանաբար», - ժողով Մոուրիսիոյի խօսքը մէջբերում է Sky Sports-ը:

35-ամեայ ֆուտպոլիստն ընթացիկ մրցաշրջանում արդէն 20 կոլ է խփել «Մանչեսթեր Եունայթեդի» կազմում:

«ՌԵԱԼԻ» ԱՐՏԱԳՆԱՅ ՅԱՂԹԱՆԱԿՆ ՈՒ «ՕՍԱՍՈՒՆԱՅԻ» ՊԱՇՏՊԱՆԻ ԴԱԺԱՆ ՎՆԱՍՈՒԱԾՔԸ

Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 22-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» Պամպլոնայում 3:1 հաշուով առաւելութեան հասաւ հետնապահ «Օսասունայի» նկատմամբ:

Պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուի գոլին դաշտի տէրերն առաջին խաղակեսում կարողացան պատասխանել, իսկ իսպանացի կիսապաշտպան Իսկոյի եւ փոխարինման դուբլը եկած Լուկաս Վասկեսի դիպոկի հարուածներին ընդմիջումից յետոյ պատասխանել չյաջողուեց:

Պաղի սկզբնամասում ոտքի կոտրուած ք ստացաւ «Օսասունայի» 22-ամեայ պաշտպան Դաւիթ Գարսիան, որը 15-րդ րոպէին պատգարակով լքեց խաղադաշտը:

Այս յաղթանակից յետոյ Արքայական ակումբը վաստակեց 49 միաւոր եւ, շրջանցելով «Բարսելոնային», վերադարձաւ առաջին տեղ: Ընդ որում՝ մադրիդցիները 2 խաղ պակաս են անցկացրել:

ՖԻՖԱ-Ի ՎԱՐԿԱՆԻՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐՁՐԱՅԵԼ Է 4 ՏԵՂՈՎ

Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականը ՖԻՖԱ-ի վարկանիշային աղիւսակում առաջադիմել է չորս տեղով եւ զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը: Աղիւսակը գլխավորում է Արժենտինան, Պրագիլիան երկրորդն է, Գերմանիան՝ երրորդը: Լաւագոյն 10-նեակում են նաեւ Չիլի, Պելզիան, Ֆրանսան, Կոլումբիան, Պորտուգալիան, Ուրուգուայը եւ Սպանիան:

ԱՇԽԱՐՀԻ ԼԱԻՎԱԳՈՅՆ ԸՄԲԻՇՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ 13 ՀԱՅ ԿԱՅ



Ըմբշամարտի համաշխարհային միութիւնը (UWW) հրապարակել է յունահունիական ըմբշամարտի վարկանիշային նոր աղիւսակը: Օլիմպիական խաղերի ախոյեան Արթուր Ալեքսանեանն առաջինն է 98 կգ քաշային կարգում:

ՀԱՕԿ լրատուականից յայտնում են, որ 66 կգ քաշային կարգում երկրորդը Օլիմպիական խաղերում արծաթէ մետալ ստացած Միհրան Յարութիւնեանն է: Նոյն քաշային կարգում Կարէն Այւանեանը 15-րդն է: 71 կգ քաշային կարգում Վարշամ Բորանեանը 8-րդ հորիզոնականում է: 75 կգ քաշային կարգում Արսէն Զուլֆալիեանը 13-րդն է, իսկ Կարապետ Չալեանը՝ 14-րդը: 80 կգ քաշային կարգում 17-րդ տեղում էրուարդ Սարգսեանն է: 85 կգ քաշային կարգում Մաքսիմ Մանուկեանը 14-րդն է:

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՓՈԽԱՐԻՆԵԼ Է ՎԼԱԴԻՄԻՐ ԿՐԱՄՆԻԿԻՆ

2017 թուականին կայանալիք Grand Chess Tour-ի մրցաշարերում Վլադիմիր Կրամնիկի փոխարէն հանդէս կը գայ հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնյանը, հաղորդում է chess.com-ը: Ռուսաստանցի գրոսմայստերը հրաժարուել է մասնակցութիւնից:



Grand Chess Tour-ի կմասնակցեն նաեւ աշխարհի ախոյեան, նորվեգացի Մագնուս Կարլսենը, ամերիկացիներ Ուեսլի Սոն, Ֆաբիանո Կարուանան ու Հիկարու Նակամուրան, ֆրանսացի Մաքսիմ Վաշլէ-Լագրավը, հնդիկ Վիշվանաթան Անանդը, ռուսաստանցիներ Սերգեյ Կարյակինն ու Յան Նեպոմյաչչին:

Grand Chess Tour-ի մրցանակային հիմնադրամը 1 միլիոն 200 հազար տոլար է:

Յիշեցնենք, որ Լեւոն Արոնեանը այս տարի նաեւ ՖԻԻԵ-ի Գրան պրի շարքի 15 մասնակիցների թւում է:

ԷԼԻՆԱ ԴԱՆԻԷԼԵԱՆՆ ՈՒ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉԵԱՆԸ ՊԱՐՏՈՒԵՑԻՆ 2-ՐԴ ՕՐԸ

Կանանց շախմատի Հայաստանի առաջատարներ էլինա Դանիէլեանը եւ Լիլիթ Մկրտչեանը աւարտեցին ելույթները Թեհրանում ընթացող աշխարհի առաջնութիւնում:



1/32 եզրափակիչ փուլի երկրորդ պարտիային էլինա Դանիէլեանը սեւ խաղաքարերով չկարողացաւ դիմակայել հնդիկ գրոսմայստեր Ռութ Պադմինիի գրոհները եւ արդէն 29-րդ քայլին անձնատուր եղաւ:

Ընդհանուր հաշիւը դարձաւ 0,5:1,5, եւ մեր շախմատիստուհին դուբլ մնաց պայքարից:

Լիլիթ Մկրտչեանը սեւերով մրցեց չինուհի Նի Շիչօուի հետ: Մեր շախմատիստուհին նուազագուցն քայլերի կատարման վերջում յայտնուեց ցայտնոտում եւ անչափ լուրջ վրիպում թոյլ տուեց, որի արդիւնքում կորցրեց թագուհուն: Լիլիթ Մկրտչեանն անմիջապէս կանգնեցրեց ժամացոյցը եւ ընդունեց իր պարտութիւնը: Այդպիսով, նա նոյն 0,5:1,5 հաշուով տանուլ տուեց մրցամարտը եւ ժամանակից շուտ աւարտեց ելույթները:

Ի դէպ, առաջնութեան կազմակերպիչների պահանջով շախմատիստուհիները պէտք է կրեն գլխաշոր: Դրա պատճառով Թեհրանում հանդէս գալուց հրաժարուել է ԱՄՆ-ի ախոյեան Նազի Պարկիձե-Բարնսը, աշխարհի 15-րդ չեմպիոն Մարիա Մուզիչուկը: